

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՎԱՆԻԿԻ

ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
(1990-2001 ԹԹ.)

Է.00.001 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր  
Վիրաբյան Ա. Ս.

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Աբրահամյան Յ. Բ.

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Գևորգյան Յ. Ս.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2015 թ. մայիսի 5-ին ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. ապրիլի 3-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար պ. գ. թ., դոցենտ

Մուրադյան Յ. Ղ.

**Թեմայի արդիականությունը և գիտական նշանակությունը.** Հայաստանի առաջին հանրապետության անկումից յոթ տասնամյակ անց հայ ժողովուրդը կրկին իրավունք նվաճեց կերտելու իր անկախ պետականությունը: Հանգամանքների բերումով Հայաստանի անկախության հաստատման գործընթացի ղեկին հայտնված քաղաքական ուժերը ստիպված էին ընթացքում և սովորել և միաժամանակ էլ հանրապետության համար դժարագույն ներքին և արտաքին պայմաններում կիրառել շատ դեպքերում միայն դառն վործով ձեռք բերված հմտությունները:

Խնդրո առարկա հիմնահարցի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել նաև, որ հանրապետության, հատկապես քաղաքական անկախության հաստատման գործընթացում ինչպես ողջ հայ հասարակությունը, այնպես էլ նրան փաստացիորեն ղեկավարող ուժերը ընդհանուր առմամբ, այնուամենայնիվ կարողացան դիմագրավել այդ ժամանակահատվածի հիմնական մարտահրավերներին: Հայ ժողովրդի պատմական հետագա ընթացքի որակական բուլրովին նոր մակարդակը կանխորոշած անկախ պետականության հաստատմանն ու նրա հետագա զարգացմանը նպատակաուղղված գործընթացի հնարավորինս համակարգված պատմաբանական վերլուծությունը հասարակության կյանքի ամենատարբեր բնագավառներում ոչ վաղ անցյալից ընծայողված նորոյա շատ մարտահրավերներին դիմագրավելու առումով չափազանց կարևոր նշանակություն ունի: Ատենախոսության խնդրո առարկա ժամանակահատվածում անկախ պետականության կայացման փորձի ուսումնասիրումն ու լուսաբանումը մեր օրերում ազգային ինքնիշխանության ամրապնդման նպատակով իրականացվող բազմաբնույթ ձեռնարկումների շարունակականության պայմաններում առանձնակի իմաստ է ձեռք բերում: Այսօր, երբ անկախության կերտման ուղիով ընթացող հայ ժողովրդի առջև ծառանում են հրատապ լուծումներ պահանջող նորանոր խնդիրներ, անհետաձգելի է դառնում ազգային պետականության հաստատման և զարգացման նպատակով իրականացված ձեռնարկումների ընթացքում կուտակված ինչպես դրական փորձի, այնպես էլ թույլ տրված սխալների, բացթողումների գիտական ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Ատենախոսությունում քննարկվող թեմայի արդիականությունը զգալի է հասարակության ներքին ու արտաքին կյանքի տարբեր բնագավառների առումով, նամանավանդ որ նորոյա շատ խնդիրներ իրենց արմատներով ձգտում են մինչև անկախության կերտման գործընթացի ամենակազմակերպական ժամանակները: Տնտեսական կյանքում պետության դերակատարություն, ազգաբնակչության սոցիալական կացություն, նորանկախ երկրի հասարակական-քաղաքական կյանք, պետական շինարարություն, հայ-արդբեջանական ձգձգված առճակատում, անկախության ողջ ընթացքում երկրին ուղեկցող շրջափակում, տակավին ձևավորվող միջպետական հարաբերություններ, համագործակցություն միջազգային կառույցների հետ, անկախացած ժողովրդի ազգային ինքնության հիմնահարցեր և այլն՝ ահա նորանկախ երկրի կյանքի թերևս ոչ բոլոր հարթությունները, որոնց առումով, կարծում ենք, անվիճելի է նման հետազոտության հրատապությունն ու արդիականությունը:

Պատմական գիտության կարևորագույն խնդիրներից է հասարակության բեկումնային պահերի լուսաբանումն ու վերլուծությունը, քանզի հենց այդ շրջանում ձևավորված իրողություններն են շատ դեպքերում պայմանավորում ինչպես ողջ քաղաքակրթության, այնպես էլ մարդկային առանձին հանրությունների հետագա ընթացքը:

Այդ առումով առանց բացառության բոլոր ժողովուրդների համար առանձնակի իմաստ է ձեռք բերում նրանց կողմից անկախության նվաճումը, պետականության հաստատման ու նրա զարգացման ընթացքը:

Հայ ժողովրդի կյանքում իր նշանակությամբ նման բացառիկ շրջադարձային գործընթացի լուսաբանման խնդիր է հետապնդում սույն ատենախոսությունը:

Հայաստանի անկախացումը հատկապես քաղաքական անկախության հռչակմանը անմիջականորեն նախորդած ժամանակահատվածում ընթացավ որպես էվոլյուցիոն գործընթաց,

երբ խՍՀՄ աստիճանական փլուզման հետ հանընթաց մեծանում էր հանրապետության ինքնիշխանությունը:

Անկախության բովանդակությունը կազմող պետական ինքնիշխանության չափերի վերաբերյալ Հայաստանի քաղաքական ուժերի մոտ առկա էին տարբեր դիրքորոշումներ, սակայն հայ հասարակության մեջ գերիշխող տեսակետն այն էր, որ հայ ժողովուրդը միանգամայն արժանիորեն պետք է հաստատեր լիակատար անկախություն: Պատմագիտական առումով բնականաբար լուրջ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից մինչև համաժողովրդական հանրաքվեի միջոցով փաստացի քաղաքական անկախության նվաճումը պետական ինքնիշխանության հաստատման ուղով ընթացող Հայաստանի նկատմամբ միութենական կենտրոնի որդեգրած կոշտ ու անբարյացակամ վերաբերմունքի պայմաններում հայկական կողմի ընտրած գործելակերպի առանձնահատկությունները:

Հայաստանում անկախության հաստատման և զարգացման նպատակով ձեռնարկված միջոցառումների համակարգի լուսաբանման առումով չափազանց կարևոր է երկրի ինքնիշխանության ծավալման ուղղությամբ իրականացված արմատական տնտեսական ձեռնարկումների, սեփականաշնորհմամբ շուկայական տնտեսակարգին անցման գործընթացի ուսումնասիրությունը, սոցիալ-տնտեսական հարաբերությունների խորքային վերակառուցման ուղղությամբ ձեռնարկված քայլերի, անկախ պետականության շուտափույթ հաստատման նպատակադրմամբ պայմանավորված, քաղաքականացվածության լուսաբանումը:

Անկասկած վերլուծության և ընդհանրացման կարիք է զգում Հայաստանում քաղաքական անկախության և տնտեսության ազատականացման միջև եղած, եթե այդպես կարելի է ասել, դիալեկտիկական կապը: Հայաստանի քաղաքական անկախացմամբ հանրապետությունում կյանքի կոչված շուկայական տնտեսակարգ եկավ իր հետագա զարգացմամբ էլ ավելի ամրապնդելու նորանկախ պետականության ինքնիշխանությունը, քանզի անկախության հասկացության էությունը կազմող ինքնիշխանությունը պետության ներքին կյանքում նշանակում է նախ և առաջ երկրի կենսական շահերից բխող տնտեսական ծրագրերի մշակման և իրականացման կարողություն: Անկախության հաստատման գործընթացը նորանկախ Հայաստանի Հանրապետության ներքին կյանքում ենթադրում էր անցման շրջանում կառուցել ինքնիշխան ժողովրդավարական պետություն, ձևավորել համամարդկային ու ազգային արժեքների վրա հիմնված քաղաքացիական հասարակություն և սոցիալական կողմնորոշմամբ շուկայական տնտեսակարգ, իսկ արտաքին ոլորտում ամենազլխավոր խնդիրներն էին ազգային շահերի պաշտպանությունը և հենվելով իրականացված արմատական հասարակական և տնտեսական համակարգային վերափոխումների վրա՝ համաշխարհային հանրության մեջ ինտեգրումը:

1. Հետազոտության մեջ անդրադառնալով խնդրո առարկա ժամանակահատվածում Հայաստանում անկախ, ինքնիշխան պետականության հաստատման և հետագա զարգացման ընթացքը գործնականորեն մարմնավորող անցման շրջանի գործընթացներին՝ փորձել ենք, հենվելով կոնկրետ փաստերի վրա, հնարավորինս մանրամասնորեն ու համակարգված ձևով ներկայացնել և վերլուծել նախապես հանրապետության ոչ ֆորմալ, իսկ անկախության հռչակումից հետո էլ արդեն Հայաստանի քաղաքական դեկլարատիվ ստանձնած ուժերի թույլ տված անկախ պետականության կայացման ընթացքին խոչընդոտող այն բացթողումներն ու սխալները, որոնց հետևանքով հանրապետության ազգաբնակչությունը ստիպված էր հաղթահարել ոչնչով չարդարացված հավելյալ դժվարություններ:

2. Ուսումնասիրության մեջ փորձել ենք անկախացման սկզբնական շրջանում հանրապետության տնտեսական ընդհանուր անկման ֆոնի վրա կոնկրետության մեջ ներկայացնել Հայաստանի արդյունաբերական հզորությունների փլուզման ընթացքը՝ հատկապես կանգ առնելով երկրի կյանքում վճռորոշ նշանակության տնտեսական միավորների տնտեսության ամբողջ ճյուղերի գործունեության դադարեցման քաղաքական դրդա-

պատճառների վրա: Ներկայացնելով Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացին խոչընդոտող հանգամանքները հնարավորինս մանրամասնորեն վերլուծել ենք հանրապետությունը համատարած խավարի ու անհուսության մատնած էներգետիկ ճգնաժամի հասարակական բնույթի պատճառները:

3. Ատենախոսության մեջ ամբողջական տեսքով ներկայացրել ենք Հայաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ վերջինիս ուղակիորեն կապված հասարակական-քաղաքական առաջընթացը արգելակող Ադրբեյջանի կողմից պարբերաբար իրականացվող շրջափակումները, Հայաստան մտնող երկաթուղու, էներգատարների նկատմամբ իրականացված ահաբեկչությունները:

4. Աշխատանքում անդրադարձել ենք պետության կողմից ձեռնարկված բացառապես հանրապետության շահերից բխող ինքնուրույն տնտեսական գործառույթների ընթացքին՝ դրանք քննարկելով, որպես ազգային լիակատար ինքնիշխանության հաստատման նախապայմաններ: Լուսաբանել ենք արտադրության միջոցների մասնավորեցման, շուկայական տնտեսության ձևավորման բազմաբնույթ գործընթացում, նաև հենց անկախ պետականության հաստատման ու զարգացման նպատակադրմամբ պայմանավորված, քաղաքական շարժառիթների դերակատարությունը:

5. Անցման շրջանի կարևորագույն հիմնախնդիրներից էր երկրի հասարակական-քաղաքական կյանքի ազատականացումը: Նորանկախ Հայաստանի համար հասարակական կյանքի ժողովրդավարականացումը միակ ուղին էր ինքնիշխանության և ազգային անկախ պետականության հարատևման համար: Ուսումնասիրության մեջ փորձել ենք հանգամանորեն ներկայացնել Հայաստանում իրականացված հասարակական-քաղաքական արմատական վերափոխումները որպես անկախ պետականության հաստատման և զարգացման նպատակով իրականացված կարևորագույն քայլեր: Ձգտել ենք հնարավորինս անաչառ կերպով ներկայացնել այդ գործընթացում օբյեկտիվ, իսկ առավել հաճախ էլ սուբյեկտիվ հիմնապատճառներով պայմանավորված սխալներն ու բացթողումները:

6. Հանրապետության անկախության հռչակումը, հասարակական հարաբերությունների ազատականացումը, անցումը շուկայական տնտեսության նախադրյալներ ստեղծեցին ժամանակի հրամայական անհրաժեշտություն դարձած նորանկախ Հայաստանի քաղաքական համակարգի ձևավորման համար: Հետազոտության մեջ ձգտել ենք հանրապետությունում ծավալված պետականաշինական և վարչաիրավական բնույթի առավել էական ձեռնարկումները ներկայացնել Հայաստանում անկախ պետականության կայացման հարթության վրա: Քաղաքական համակարգի ձևավորման ոլորտում երկրի կառավարման ղեկը ստանձնած քաղաքական ուժերի կողմից թույլ տրված առավել էական որոշ սխալների վերհանումը ևս տեղ է գտել մեր աշխատանքում:

7. Խնդրո առարկա ժամանակահատվածում հայկական անկախ պետականության հաստատմանը միտված կարևորագույն խնդիրներից էր համաշխարհային հանրության կողմից ազգային պետության ճանաչումը, որը իրավամբ նորաստեղծ պետականության լիակատար անկախության թերևս ամենաէական չափորոշիչներից է:

Սույն աշխատանքում փորձել ենք հնարավորինս ամբողջականորեն ներկայացնել Հայաստանի Հանրապետության որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտի, համաշխարհային հանրության կողմից ճանաչման և դրանով ևս Հայաստանի անկախ պետականության հատատման գործընթացը:

8. Ատենախոսությունում փորձել ենք արտաքին աշխարհում Հայաստանի լիիրավ սուբյեկտայնության կայացման համատեքստում հնարավորինս համակարգված ձևով ներկայացնել-վերլուծել միջազգային կառույցներին ՀՀ անդամակցության և նրանց հետ համագործակցության ծավալման հիմնահարցերը:

9. Աշխատանքի և մեկ առանձնահատկություններից է այն, որ նրանում փորձ է կատարվել լուսաբանելու և ընդհանրացնելու անկախացմանը անմիջապես նախորդած և հատկապես Հայաստանի անկախությունը հռչակելուց հետո անկախ պետականության հաստատման և զարգացման բնագավառում հայ ժողովրդի արմատական շահերի

հետևողական պաշտպանության ուղորտում ծավալված գործընթացները: Այդ առումով առանձնակի տեղ է հատկացված Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարին սատարելու գործընթացի վերլուծությանը: Փաստորեն պետական մակարդակով արցախահայության արդարացի պահանջի պաշտպանության ստանձնումը հենց Հայաստանի նորանկախ Հանրապետության ինքնիշխանության կարևորագույն դրսևորումներից էր, անկախ պետականության հաստատման և զարգացման ընթացքի անզուսահատելի ձեռքբերումը:

10. Հետազոտության մեջ փորձ է կատարվել լուսաբանել նորանկախ Հայաստանում ազգային ինքնիշխանությամբ պայմանավորված կենսական շահերի և հիմնարար արժեքների գերակայության ապահովման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, որոնք էլ միաժամանակ լուրջ ներդրում էին անկախ պետականության հաստատման գործում: Նվաճելով իր անկախությունը՝ հայ ժողովուրդը պատմական հնարավորություն ստացավ պետականորեն արժարժելու իր ինքնության հետ ուղղակիորեն առնչվող բազմաբնույթ հիմնախնդիրները, այդ հարթությունում ևս պաշտպանելով հայ ազգի կենսական շահերը:

**Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները.** Փաստորեն, հենվելով ատենախոսության մեջ գիտականորեն լուսաբանված հիմնահարցերի ներկայացված շարադրանքի վրա՝ կարող ենք արձանագրել, որ սույն հետազոտության գլխավոր նպատակն է արխիվային փաստերի, հրատարակված սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի և թեմային առնչվող հրապարակի վրա առկա գիտական գրականության համակողմանի հետազոտման հենքի վրա ներկայացնել, ուսումնասիրության մեջ ներառված ժամանակաշրջանում, Հայաստանում ազգային կենսական շահերով պայմանավորված ինքնիշխանության ծավալման ուղով անկախ պետականության հաստատման և զարգացման հնարավորինս ամբողջական գործընթացը:

Ուսումնասիրության հիմնական առարկայի հետազոտման նպատակով մեր կողմից համակարգային վերլուծության են ենթարկվել մի ամբողջ խումբ այնպիսի փոխկապակցված, միմյանց փոխպայմանավորող էական հիմնահարցեր, ինչպիսիք են Հայաստանի քաղաքական անկախացման հասարակական և տնտեսական նախադրյալները, հանրապետությունում հասարակության կողմից ազգային, սոցիալական կենսական շահերի հաշվառման վրա խարսխված ինքնիշխանության հաստատման անենանախնական, տակավին աղոտ, բայց միաժամանակ կայուն դրսևորումները, այդ հարթության վրա Հայաստանում քաղաքական դաշտի ձևավորումը, քաղաքական ուժերի դիրքորոշումները: Աշխատանքում ձգտել ենք բացահայտել և վերլուծել Հայաստանում պետական ինքնիշխանության հաստատման ուղղությամբ ձեռնարկված հասարակական-տնտեսական բնույթի միջոցառումների վճռորոշ դերակատարությունը անկախ պետականության հաստատման և զարգացման գործընթացում, վեր հանել այդ ուղղությամբ իրականացված կոնկրետ քայլերում տեղ գտած օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի սխալներն ու բացթողումները: Հատկապես լուսաբանվել է պետական սեփականության մասնավորեցման գործընթացի, հիմնականում նաև անկախ պետականության հաստատման գործում հնարավորինս արագորեն, շուտափույթ վճռորոշ բնագծեր նվաճելու իշխանությունների կողմից որդեգրած գործելաոճի հետևանքով, ամհարկի քաղաքականացվածությունը, նման քաղաքականության արդյունքում հանրապետության տնտեսության կազմալուծումը, ազգաբնակչության սոցիալական կացության անասելի վատթարացումը:

Աշխատությանն առնչվող խնդիրների հետազոտման առումով կարևորվել է նաև անկախ պետականության հաստատմանը և զարգացմանը էապես խոչընդոտող այլ հիմնահարցերի, մասնավորապես Հայաստանի պարբերական շրջափակումների, հարևան տարածքների հանրապետություն մտնող էներգատարների նկատմամբ կրկնվող ահաբեկչությունների ընթացքի հնարավորինս համգամանալի լուսաբանումը:

Ատենախոսության մեջ նպատակ ենք հետապնդել ներկայացնելու քաղաքական համակարգի ձևավորման, ինքնիշխան պետականության հաստատման համար իրականացված պետաիրավական գործընթացների բնույթն ու առանձնահատկությունները, հա-

մաշխարհային հանրության կողմից ազգային պետության ճանաչումն ու այդ հենքի վրա այլ երկրների հետ հարաբերությունների հաստատումը, միջազգային հեղինակավոր կառույցներին անդամակցումն ու նրանց հետ համագործակցության ընթացքը, նորանկախ պետության կողմից հայ ժողովրդի արմատական շահերին սատարելը, Հայաստանի հասարակական կյանքում պատմական զարգացման ողջ ընթացքով պայմանավորված ազգային հիմնարար արժեքների վերահաստատման ինքնաբերական կերպով ծավալված գործընթացի լուսաբանումն ու վերլուծությունը: Քննարկված հիմնահարցերի կապակցությամբ հետազոտության մեջ արտահայտվել են որոշ նկատառումներ, արվել կոնկրետ առաջարկություններ:

***Առենախոսության ժամանակագրական շրջանակները.*** Ուսումնասիրությունն ընդգրկում է հիմնահարցի առումով ուղենիշային իրադարձություններով որոշակիացված ժամանակահատված: Հետազոտությունն սկսվում է հիմնականում 1990 թվականին հայոց անկախ պետականության վերահաստատման հարթության վրա հանրապետությունում ծավալված հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական առավել հատկանշական գործընթացների լուսաբանմամբ և վերլուծությամբ: Խնդրո առարկա հիմնահարցի ուսումնասիրության համար 1990 թվականը որպես մեկնարկային է ընտրվել մասնավորապես հաշվի առնելով, որ հենց այդ շրջանում հանրապետությունում առավել քան որոշակիացել էին հատկապես հասարակական-քաղաքական առաջնայնությունները: Հենց 1990 թվականին Հայաստանում անցկացված Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրություններով, իսկ ապա նաև հայ ժողովրդի կյանքում անձնագրային նշանակության փաստաթղթի Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումով հանրապետությունում, առանց բացառության կյանքի բոլոր ոլորտներում, աներևակայելի արագությամբ սկսվեց պետական ինքնիշխանության ծավալման, անկախ պետականության հաստատման և հետագա զարգացման գործընթացը:

Իսկ ինչ վերաբերում է ատենախոսության ժամանակագրական վերջնագծին, ապա 2001 թվականը, որպես հետազոտության վերջնակետ ևս ընտրվել է ոչ պատահականորեն: 2001 թվականին լրացավ Հայաստանի անկախության հռչակման 10 տարին: Գործնական արդյունքների առումով դա լուրջ բնագիծ էր անկախ պետականության հաստատման ու զարգացման նպատակով երկրում իրականացված բազմաբնույթ ձեռնարկումների գործընթացում: Ազգային ինքնիշխան պետականության կերտման ուղղվ տասնամյա ընթացքի հիմնական հանգրվանը արդեն իսկ կայացած անկախությունն էր, որը նախ և առաջ դրսևորվեց նոր պետականության ձևավորման, նորանկախ երկրի ներքին ու արտաքին կյանքում իրականացված արմատական ձեռնարկումների արդյունքում հիմնականում համընդհանուր կառուցվածքային ձևափոխումների ավարտով:

***Ուսումնասիրության մեթոդաբանությունը.*** Հետազոտության մեթոդաբանական հիմքում արխիվային փաստաթղթերի սկզբնաղբյուրային նշանակության գրականության, մամուլի հրապարակումների, ինչպես նաև խնդրո առարկա հիմնահարցի լուսաբանման հետ առնչվող գիտական գրականության համեմատական ուսումնասիրությունն է: Հետազոտությունում շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է գլխավորապես թեմատիկ սկզբունքով: Ուսումնասիրության պատմամեթոդական մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել շատ դեպքերում նորովի լուսաբանել բազմաթիվ հիմնախնդիրներ և փորձել որոշակի առաջարկներ անել դրանց արդյունավետ լուծման ուղղությամբ: Հետազոտությունը իրականացրել ենք նաև համկարգային վերլուծության, գիտական վերացարկման եղանակների կիրառմամբ և այն:

***Առենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը.*** Ընդհանրացնելով ատենախոսության մեջ լուսաբանված պատմագիտական նորույթ հանդիսացող հիմնախնդիրների հնարավորինս համառոտ ներկայացումը՝ կարող ենք կրկին որոշակիորեն արձանագրել, որ հետազոտության հիմնական գիտական նորույթը Հայաստանում, խնդրո առարկա ժամանակաշրջանում, անկախ պետականության հաստատման և զարգացման նպատակով իրականացված գործընթացի հնարավորինս ամբողջական,

համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, որ կատարվում է առաջին անգամ: Նրանում հայ ժողովրդի պատմության թերևս իր բախտորոշ նշանակությամբ բացառիկ դարակազմիկ գործընթացը՝ հայոց պատմական հողի վրա անկախ պետականության վերահաստատման ընթացքը ներկայացված է որպես հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտներում, այդ թվում՝ ազգային, հոգևոր, համաշխարհային հանրության մեջ ինտեգրվելու և երկրի ներքին ու արտաքին կյանքի այլ կարևոր բնագավառներում ծավալված գործընթացների ամբողջական համակարգ: Հարկ է նաև արձանագրել, որ հիմնահարցի հնարավորինս ամբողջական և փոխկապակցված ուսումնասիրումը օբյեկտիվորեն հիմք է հանսդիսացել սույն ատենախոսությունում, այլ հեղինակների հրապարակումների համեմատ, բավականին մեծ ծավալի փաստական նյութի ներկայացման ու լուսաբանման, ինչպես և բազմաթիվ գիտական եզրահանգումների ու տեսակետների առաջադրման համար: Քննարկվող հիմնահարցի համակարգված լուսաբանումը միաժամանակ հնարավոր է դարձրել ուրիշ հետազոտողների՝ ատենախոսության թեմայի հետ առնչվող որոշ ուսումնասիրություններում տեղ գտած փաստական բնույթի անձնությունների շտկումը, ինչպես նաև, զերազանցապես այդ հետազոտությունների հատվածայնությամբ պայմանավորված որոշ հապշտապ կատարված, չհիմնավորված սխալ հետևությունների վերանայումը:

Ատենախոսությունն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական և կիրառական որոշակի նշանակություն: Նրանում առաջադրված դրույթները և վերլուծությունների արդյունքում կատարված եզրահանգումներն ու առաջարկությունները, ըստ էության, առկա ժամանակահատվածում անկախ պետականության համակողմանի հաստատման և հետագա զարգացման նպատակով շարունակաբար իրականացվող ձեռնարկումների պայմաններում ձեռք են բերում անմիջական գործնական նշանակություն:

Աշխատությունն ունի նաև պատմա-ճանաչողական կարևոր նշանակություն, քանզի հետազոտության արդյունքները անկասկած պահանջված են Հայաստանի նորագույն շրջանի պատմության, մասնավորապես անկախ պետականության կայացման, նորանկախ Հայաստանի հասարակական-քաղաքական, տնտեսական ոլորտների հարցերը ուսումնասիրողների կողմից, ինչպես նաև կարող են օգտագործվել դպրոցական և բուհական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ շարադրելիս:

***Ուսումնասիրության փորձաքննությունը.*** Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի նիստում:

Ատենախոսության թեմայով հրապարակվել է մենագրություն, հոդվածներ, զեկուցումներ են կարդացվել գիտական նստաշրջաններում:

***Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը.*** Աշխատությունում խնդրո առարկա հիմնահարցը լուսաբանվել և վերլուծվել է արխիվային նյութերի, տպագիր սկզբնաղբյուրային գրականության, մամուլի հրապարակումների, հետազոտությունում արծարծված հիմնահարցերի վերաբերող գիտական գրականության հիման վրա:

Թեմայի գիտական լուսաբանման համար առաջնահերթ բացառիկ կարևորություն ունեն արխիվային նյութերը, որոնք նոր լույս են սփռում հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա: Աշխատության մեջ շրջանառության մեջ են դրվել Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացի տարբեր խնդիրներին վերաբերող Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական բաժնի (ՀՀ ԱԳՆ ՊԴԲ) արխիվի բազմաթիվ նյութեր: Հետազոտության մեջ լայնորեն օգտագործվել են խնդրո առարկա հիմնահարցի տարաբնույթ խնդիրների հետ առնչվող փաստագրական վերլուծական բնույթի ժողովածուներ:



Հարկ է նշել, որ Հայաստանում անկախ պետականության հաստատման հիմնահարցին վերաբերող զուտ պատմագիտական բնույթի տպագիր սկզբնաղբյուրները, ինչպես և այլ բնույթի գրականությունը չափազանց քիչ է: Ընդ որում դեպքերի մեծամասնությունում էլ անկախ պետականության հաստատմանը միտված հասարակական-քաղաքական գործընթացները վերլուծված են ընդամենը սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների ներակայացմանը հարակից: Ինչպես փաստագրական հարուստ նյութ, այնպես էլ գիտական լուրջ վերլուծություններ են պարունակում հատկապես Հայաստանում ամենաբազմազան միջազգային կառույցների ծավալած գործունեությունն ու դրանց արդյունքները լուսաբանող ժողովածուները<sup>1</sup>: Փաստական տեղեկատվության, ինչպես նաև հետազոտության թեմային ուղղակիորեն վերաբերող մի շարք հիմնահարցեր են քննարկվել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի նախածեռնությամբ և անմիջական նյութական ու մեթոդական օժանդակությամբ հանրապետության անկախ փորձագետների կողմից մշակված և 1995 թվականից սկսած պարբերաբար հրատարակված «Մարդկային զարգացման ազգային զեկույցի» ամենամյա համարները<sup>2</sup>: Դրանք ըստ էության հանդիսանում էին տարվա կտրվածքով կենտրոնացված քաղաքական ու տնտեսական համակարգից դեպի ազատական հասարակական հարաբերությունների և շուկայական տնտեսության ընթացող Հայաստանի Հանրապետության նկարագիրը:

Անկախ պետականության հաստատման և զարգացման գործընթացի, հատկապես հասարակական-քաղաքական հարթության լուսաբանման առումով որոշակի գիտական արժեք են ներկայացնում ատենախոսության մեջ լայնորեն օգտագործված պետական և հասարակական տարբեր մակարդակների գիտական, գիտահետազոտական բնույթի հաստատությունների, կազմակերպությունների կողմից հրատարակված գործնականում նաև աղբյուրագիտական նշանակություն ունեցող բազմաթիվ ուսումնասիրություններն ու քաղաքագիտական բնույթի հրատարակումները<sup>3</sup>: Հիշատակված, հատկապես հան-

---

<sup>1</sup> Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին 1992-2001. Նվիրումի և համագործակցության տասնամյակ, Երևան, 2001թ., Ազգային գնահատման զեկույց. Հայաստանի Հանրապետություն (Կայուն զարգացման համաշխարհային զագաթնաժողով: Յոհանեսբուրգ, 2002), Երևան, 2002թ.: Հայաստանի Հանրապետության դատական համակարգը (Ք. Ինթերնեշնել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Հայաստանի դատաիրավական և տնտեսական օրենսդրության բարեփոխումների ծրագիր, Երևան, 2002թ., ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության Երևանյան գրասենյակ. Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Երևան, 2003թ., ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության Երևանյան գրասենյակ. միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, 15 տարի, Երևան, 2007թ., Հայաստան-ՆԱՏՕ առաջընթացի 10 տարիներ 1999-2008թթ., Երևան, 2008թ.:

<sup>2</sup> Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1995թ., Եր.: 1995թ. Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1996, Եր.: 1996թ., Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1997, Եր.: 1997թ., Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998, Պետության դերը, Եր.: 1998թ., Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1999, Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, Եր.: 1999թ., Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2000, Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը. գործողություն հանուն առաջընթացի, Եր.: 2000թ., Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան 2001թ.:

<sup>3</sup> Հայաստանը արհավիրքի առջև: Ինչն է պատճառը, ինչպես հաղթահարել: Սահմանադրություն միայն սահմանադիր ժողովի ճանապարհով, Եր.: 1992թ., Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունները / «Դեմոկրատիա» միություն,- Ե.: 1996թ., Հայաստանը կայուն մարդկային զարգացման հայեցակարգի տեսանկյունից: Հասարակական կազմակերպությունների գնահատականը / «Հանուն մարդկային հասարակության կայուն զարգացման» ասոցիացիա «Ռիո+5», Ե.: 1997թ., Հայաստանի զանգվածային լրատվության միջոցները: Գնահատականներ և ինքնագնահատականներ / «Թիմ» հասարակական կազմակերպություն,- Ե.: 1997թ., Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը: Ազգային զեկույց/ ՀՀ վիճակագրական պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն,- Ե.: 1999թ., Դիվանա-

րպատեության ներքին կյանքին վերաբերող, հրապարակումների բերև ամենահատկանշական գիծը ինքնիշխանության հետագա ծավալման ուղով ընթացող Հայաստանում հասարակական-քաղաքական կյանքը սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ ունեցած սերտ առնչությունների, ինչ-որ տեղ նույնիսկ անմիջական ֆունկցիոնալ կապի մեջ դիտարկելն է:

Ստեճախտության մեջ օգտագործված, վերը ներկայացրած տիպի հրապարակումների գերակշռող մասն էլ վերաբերում է խնդրո առարկա ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքին: Դրանք հիմնականում վիճակագրական ժողովածուներ են, հանրապետության սոցիալ-տնտեսական կացությունը պարբերաբար լուսաբանող տեղեկատվական-վերլուծական զեկույցներ, վիճակագրական բնույթի այլ հրապարակումներ<sup>1</sup>:

---

գիտական ծառայությունը Հայաստանում / ՀՀ արտաքին գործերի նախարարություն.- Եր.: 1999թ., Հայաստանը և կենտրոնը / Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն.- Եր.: 1999թ., Հայաստանի ազգությունները /Կոնֆլիկտների լուծման Հայաստանի կենտրոն / Հայաստանի Ազգությունների միություն.- Ե.: 2000թ., Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Երկրորդ գումարում.- Ե.: 2001թ., Հայաստանի զարգացման ուրվագծեր, Սեմինարի նյութեր / նույն-բեր 2000թ.- մարտ 2002թ. / «Գերագույն խորհրդի պատգամավորական ակումբ».- Ե.: 2002թ., Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականությունը / ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն.- Ե.: 2003թ., Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական վերլուծական զեկույց / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2003թ., «Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցություններ»: Տեղեկագիր / Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ խմբ. Ս. Մխիթարյան, Ս. Անուշյան և ուրիշներ.- Ե.: 2005թ., Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն / Հասարակական երկխոսություն և զարգացումներ կենտրոն.- Ե.: 2005թ., Հայաստանը փոխակերպվող աշխարհում / Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն.- Ե.: 2006թ.:

<sup>1</sup> Հայաստանը թվերում 1990 թվականին: Վիճակագրական համառոտ ժողովածու / ՀՀ վիճակագրության պետական կոմիտե.- Ե.: 1990թ., Հայաստանը թվերով 1992: Վիճակագրական համառոտ ժողովածու / ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչություն.- Ե.: 1994թ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1996թ. հունվար-ապրիլին / ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի վերլուծության վարչություն.- Ե.: 1996թ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1997թ. հունվար-սեպտեմբերին / ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի վերլուծության վարչություն.- Ե.: 1997թ.: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1997 թվականին / Վիճակագրական ժողովածու / ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի վերլուծության վարչություն.- Ե.: 1999թ., Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1998 թվականին / Վիճակագրական տեղեկագիր / ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի վերլուծության վարչություն.- Ե.: 1999թ., Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը: / Վիճակագրական տեղեկագիր // ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի վերլուծության վարչություն.- Ե.: 1999թ., ՀՀ տնտեսության զարգացման հայեցակարգային մոտեցումները / ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ.- Ե.: 1999թ. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999 թվականին / Վիճակագրական ժողովածու / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2000թ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-նոյեմբերին (Տեղեկատվական վերլուծական ամսական զեկույց) / ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն.- Ե.: 2000թ., Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական բնութագրիչները / ըստ 1991-1999թթ. սոցիալ-տնտեսական միտումների / Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն.- Ե.: 2000թ. Հայաստանի ազգային հաշիվները 1990-1997: Վիճակագրական ժողովածու / Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն.- Ե.: 2000թ., Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000 թվականին: Վիճակագրական ժողովածու / ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.:

Ատենախոսության խնդրո առարկա հիմնահարցի կարևորագույն բնագավառներից մեկի՝ իր անկախությունը հռչակած Հայաստանի տնտեսության ոլորտում պետական ինքնիշխանության հաստատման հիմնախնդրի ուսումնասիրման առումով բացառիկ նշանակություն ունեն հատկապես կառավարության վիճակագրական ծառայության կողմից պարբերաբար լույս ընծայված հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը արտացոլող Հայաստանի վիճակագրական տարեգրքերը<sup>1</sup>:

Խորհրդային Միության փլուզումից հետո անկախ պետականության հաստատման և զարգացման ուղով ընթացող Հայաստանի պատմությունը՝ իր մեջ լուրջ առավելություններ պարունակող, համեմատական եղանակով լուսաբանելու նպատակով օգտագործվել են միջազգային կառույցների և հատկապես Անկախ պետությունների համագործակցության հասարակական-տնտեսական կյանքին վերաբերող սկզբնաղբյուրային նշանակության ժողովածուներ<sup>2</sup>: Հետազոտությունը իրականացնելիս բնականաբար բառի բուն իմաստով լայնորեն կիրառվել են ՀՆԱՅ Գերագույն խորհրդի, ՀՀ Գերագույն խորհրդի, ՀՀ Ազգային ժողովի ու ՀՀ պաշտոնական տեղեկագրերը: Խնդրո առարկա հիմնահարցի համակողմանի հետազոտության, հատկապես պետաիրավական բնույթի ձեռնարկումները մեկնաբանելիս ըստ ամենայնի՝ օգտագործվել են Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածուները:

Հայաստանում անկախ պետականության հաստատման, նորանկախ երկրի ազգային

---

2001թ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թվականի հունվար-նոյեմբերին: Տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույց / Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2001թ.: Հայաստան 2001 վիճակագրական գրքույկ / Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2001թ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001թ. հունվար-հոկտեմբերին: Տեղեկատվական վերլուծական ամսական զեկույց / Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2001թ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թվականի հունվար-նոյեմբերին, Տեղեկատվական վերլուծական ամսական զեկույց, /Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2001թ., Հայաստան 2001 վիճակագրական գրքույկ/Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն: Ե.: 2001թ., Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 1999-2000, վիճակագրական ժողովածու.- Ե.: 2002թ., Հայաստանի Հանրապետության սպառողական շուկան 1995-2001: Վիճակագրական ժողովածու / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն: Ե.: 2002թ., Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2001 թվականին: Վիճակագրական-վերլուծական զեկույցագիր /ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2002թ.: Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը 1997-2001 / Վիճակագրական ժողովածու // ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2002թ., ՀՀ կենտրոնական բանկ Հայաստանի բանկային համակարգը: Հոդվածներ / Խմբ.,Լ. Դավթյան, Բ. Ասատրյան.- Ե.: 2002թ., Հայաստանը թվերով 2003 / Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2003թ. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2001 թվականին: Վիճակագրական ժողովածու / Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2003թ., ՀՀ կառավարության գործունեությունը 2000-2004թթ.: Քաղաքականություն, նպատակ, իրագործում, արդյունք, անելիքներ.- Ե.: 2005թ.

<sup>1</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996 / ՀՀ վիճակագրություն, պետական ռեզիստորի և վերլուծության նախարարություն.- Ե.: 1998թ., Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001 (1997, 1998), / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2001թ., Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001 (1999-2000) /ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2001թ., Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002, / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն.- Ե.: 2002թ.

<sup>2</sup> Содружество независимых государств: Десять лет спустя. 1991-2001. / Исполнительный комитет СНГ, Минск, 2001г., Содружество независимых государств в 2002 году, Статистический ежегодник / Межгосударственный статистический комитет СНГ.-М.: 2003г.

անվտանգության ամրապնդման, թերևս ամենակարևոր ոլորտներից մեկի սոցիալական ուղղվածությամբ պետության կայացման հիմնահարցերին անդրադառնալիս լայնորեն օգտագործվել է նաև սոցիալական բնույթի իրավական ակտերի ժողովածուն<sup>1</sup>: Բնականաբար աշխատանքում օգտագործվել է հետազոտության առանձին խնդիրներին վերաբերող Հայաստանի անկախության հռչակմանը, ազգային կենսական շահերի պաշտպանությանը, ՀՀ միջազգային ճանաչմանն ու արտերկրի հետ հարաբերությունների ձևավորմանը և հանրապետության անկախության հաստատմանը անմիջականորեն վերաբերող այլ հիմնահարցեր լուսաբանող դիվանագիտական բնույթի փաստաթղթերի ժողովածուները<sup>2</sup>, պատմագիտական բնույթի տպագիր սկզբնաղբյուրային զրականությունը: Հետազոտությունը իրականացնելիս հնարավորինս մանրամասնորեն օգտագործվել է նաև մանուլը:

Հայաստանի երրորդ հանրապետության պատմության հնարավորինս ամբողջական լուսաբանմանը նվիրված առաջին պատմագիտական բնույթի հետազոտությունը Գ. Գեղամյանի և Ռ. Ազիզբեկյանի հեղինակած «Հայաստանը 1945-1990-ական թվականներին» աշխատությունն է<sup>3</sup>:

Ծիշտ է, տակավին 1994 թվականին լույս տեսած հետազոտությունը նախատեսված էր որպես ուսումնասիրման ձեռնարկ հանրակրթական դպրոցի հայոց պատմության առարկայի ուսումնասիրման նպատակով, սակայն, ինչպես երբեմն է պատահում, լինելով հայ ժողովրդի պատմության հետպատերազմյան շրջանը նորովի ներկայացնող և հատկապես արցախյան շարժման ու անկախության ուղով Հայաստանի ընթացքի առաջին տարիների միակ ամբողջական ուսումնասիրությունը, գիտական առումով այն անհամեմատ ավելի խորն ու տարողունակ ձեռնարկ է, քան պարզապես դպրոցական համեմատաբար հանրամատչելի դասագիրքը: Աշխատանքում ընդհանրացնելով արցախյան ընդվզումով ոտքի ելած հայ ժողովրդի ազատագրական պայքարի Հայաստանի քաղաքական անկախացմանը նախորդած շրջանը՝ հեղինակները եկել են այն եզրահանգմանը, որ այդ շրջանից էլ հայ ժողովրդի համար խնդրո առարկա ժամանակահատվածում առաջին պլան մղվեց գործնականում ազգային անկախ պետականություն ստղծելու գաղափարը<sup>4</sup>: Ձեռնարկում, ըստ էության, առաջին անգամ փորձ է կատարվել առավել ընդհանուր ձևով ուրվագծել անկախության նվաճման և կայացման ուղղությամբ Հայաստանում իրականացված սկզբնական քայլերը և այլն:

Ի դեպ, ներկայացվող ուսումնասիրության մեջ քննարկվող որոշ հիմնահարցեր լուսաբանված են նաև տակավին 1992 թվականին Ռ. Ազիզբեկյանի հեղինակությամբ հրատարակված «Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն» ուսումնասիրությամբ:

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու: 2004թ. հունվարի 1-ի դրությամբ, կատարված լրացումներով և փոփոխություններով / ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Կազմող՝ Յ. Գորոյան, Ա. Մանուկյան.- Ե.: 2004թ.:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995թթ., Երևան, 2002թ., Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998թթ., Երևան, 2002թ., Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001թթ., Երևան, 2002թ., Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու. Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված պայմանագրեր, Երևան, 2004թ., Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու. Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում կնքված պայմանագրեր, Երևան, 2004թ.:

<sup>3</sup> Ազիզբեկյան Ռ.Լ. Գեղամյան Գ.Մ., Հայաստանը 1945-1990-ական թվականներին, Ե.- 1994թ.:

<sup>4</sup> Սույն տեղում, էջ 123:

յան մեջ<sup>1</sup>: Որպես պատմագիտական ուսումնասիրություն, անշուշտ ուշադրության արժանի է Հ. Աբրահամյանի «Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ.» աշխատությունը, որում հեղինակը, մասնավորապես, ներկայացնելով Խորհրդային Միության փլուզման նախադրյալներն ու բուն ընթացքը, անդրադարձ է կատարել այդ ժամանակահատվածում Հայաստանում առկա իրավիճակին, հետխորհրդային շրջանում հայ-ռուսական հարաբերությունների առանձնահատկություններին և Արցախի հիմնահարցի զարգացումներին<sup>2</sup>:

Նշված ուսումնասիրություններում Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացը չի քննարկվել, որպես երկրում ծավալված ազգային արմատական շահերով պայմանավորված հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի ձեռնարկումների փոխկապակցված, փոխպայմանավորված ընդհանրություն:

Հայաստանի երրորդ հանրապետության պատմությանը վերաբերող արժեքավոր պատմագիտական հետազոտություն է Է. Մինասյանի «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.)» աշխատությունը<sup>3</sup>, որում հեղինակը իրադարձությունների տաք հետքերով լուսաբանել է անկախության 13 տարվա ընթացքում հանրապետությունում շուկայական տնտեսակարգի ձևավորման ուղղությամբ իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումները, ինչպես նաև ընդհանուր գծերով ներկայացվել են հասարակական-քաղաքական բնույթի որոշ գործընթացներ: Ուսումնասիրության մեջ լուսաբանվել են անցման շրջանում ՀՀ-ում սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքում ունեցած ինչպես ընդհանուր բնույթի ձեռքբերումները, այնպես էլ բացթողումները: Մասնավորապես, հետազոտության մեջ հեղինակը նկատում է, որ հանրապետությունում իշխանության հասած քաղաքական ուժերը թերագնահատեցին հատկապես անցման շրջանում պետության կարգավորիչ, ուղղորդող դերակատարությունը<sup>4</sup>:

Սակայն Է. Մինասյանի նշված ուսումնասիրության շրջանակները ընդգրկում են գլխավորապես շուկայական տնտեսությանը անցման շրջանում Հայաստանում իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումները, որոնց ենթատեքստում են միայն քննարկվել Հայաստանի խնդրո առարկա ժամանակահատվածի հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող որոշ հարցեր: Հայաստանում անկախ պետականության հաստատման բուն գործընթացի լուսաբանումը չի հանդիսացել Է. Մինասյանի հետազոտության նպատակը:

Արժեքավոր ուսումնասիրություն է նաև Է. Մինասյանի 2014թ. լույս ընծայած «Հայաստանի երրորդ հանրապետության պատմությունը»<sup>5</sup> աշխատանքը, որում հեղինակը ներկայացրել է ՀՀ և ԼՂՀ ընդհանրացված պատմությունը՝ նրանց ստեղծումից մինչև 2012թ.: Աշխատանքում հեղինակը մասնավորապես փորձել է գիտականորեն ներկայացնել Հայաստանում և Արցախում, խնդրո առարկա ժամանակահատվածում, հասարակության կյանքի տարբեր ոլորտներում իրականացված առավել էական քայլերը:

Նորանկախ Հայաստանի գոյության առաջին տասնամյակում պետականության հաստատման և հետագա զարգացման գործընթացի շուսումնասիրված հիմնահարցը փորձել ենք լուսաբանել սույն ատենախոսությանը:

---

<sup>1</sup> Ազիզբեկյան Ռ.Լ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ.- Ե.: 1992թ.:

<sup>2</sup> Աբրահամյան Հ., Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ., Երևան, 2011թ.

<sup>3</sup> Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.). Երևան, 2003թ.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 94, 232:

<sup>5</sup> Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն,- Ե.: 2014:

Հրապարակի վրա առկա են Հայաստանի արտաքին քաղաքականության առանձին հարցերի լուսաբանմանը նվիրված, ատենախոսությունում քննարկվող հիմնահարցի առումով որոշակի հետաքրքրություն ներկայացնող ուսումնասիրություններ<sup>1</sup>:

Ավելի մեծաքանակ են խնդրո առարկա ժամանակահատվածի հիմնախնդիրների վերլուծությանը նվիրված տնտեսագիտական բնույթի աշխատությունները, որը բացատրվում է հիմնականում այն հանգամանքով, որ բառացիորեն հասարակության յուրաքանչյուր անդամի ամենակենսական շահերը գործնականում անմիջականորեն շոշափող տնտեսակարգի արմատական հեղաբեկմանը նպատակամղված քայլերի ունեին հասարակական-քաղաքական բացառիկ հնչեղություն ինչպես բուն գործընթացի, այնպես էլ ձեռնարկված քայլերի հետևանքների առումով, քանզի վերջին հաշվով դրանք էին պայմանավորում հասարակության սոցիալական կառուցվածքը, երկրի քաղաքական համակարգը, պետականության ձևը, հանրության ողջ արժեհամակարգը, ընդհուպ մինչև նորանկախ երկրի հասարակության հոգևոր չափորոշիչները և այլն:

Տնտեսագիտական ուսումնասիրությունների առումով ևս Հայաստանում անկախ պետականության հաստատման հիմնահարցը ամբողջությամբ գործնականում ուսումնասիրված չէ: Սակայն, այնուամենայնիվ, հասարակության տնտեսական կյանքին վերաբերող այդ հետազոտություններում պարունակվում է մեծ քանակությամբ փաստական նյութ, տեսլականներ, ընդհանրացումներ ու եզրահանգումներ, քննարկված են անկախության հաստատման շրջանի բազմաթիվ հիմնահարցեր: Ատենախոսության մեջ քննարկվող հարցերի լուսաբանման տեսանկյունից մեր կարծիքով լուրջ հետաքրքրություն են ներկայացնում Ա. Մարկոսյանի հեղինակած ուսումնասիրությունները, որոնցում ներկայացվել-վերլուծվել են անցման շրջանում Հայաստանում բաժնետիրացման եղանակով իրականացված սեփականաշնորհման առանձնահատկություններն ու ընթացքը, լուսաբանված է պետական սեփականության մասնավորեցման գաղափարախոսությունը, ներկայացված է տնտեսական վերափոխումների կարգավորման պետական համակարգը, վերլուծված են ՀՀ տնտեսական անվտանգության ռազմավարության հիմնահարցերը, քննարկված է Հայաստանի տնտեսական շահերի ապահովմանն ուղղված պետության ծավալած գործունեությունը<sup>2</sup> և այլն: Հայաստանի տնտեսական բնույթի զարգացումների մեջ հետաքրքրող հարթության առումով առավել կարևորվում են նաև այդ աշխատություններում մրցակցության պաշտպանության, հակամենաշնորհային պետական քաղաքականության հետ առնչվող հիմնահարցերի գիտական մեկնաբանությունները և այլն: Քննարկվող հետազոտություններում հիմնավորված է այն տեսակետը, որ տնտեսական անվտանգության ապահովու-

---

<sup>1</sup> Այվազյան Ա., Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում,- Ե.: 2007թ.: Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին),- Ե.: 2003թ., Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրները հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004 թթ.),- Ե.: 2006թ.: Բեգանյան Լ., Բայբուրդյան Ա., Պարզյան Ա., Եվրոպական միություն և Հայաստան: ԵՄ պատմությունը, կառուցվածքը: ԵՄ-Հայաստան հարաբերությունները,- Ե.: 2010 թ., Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ.,- Ե.: 2011թ., Քեռյան Գ., Սիմոնյան Հ., Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները,- Ե.: 2005թ.:

<sup>2</sup> Մարկոսյան Ա.Խ., Պետական և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների մասնավորեցումը,- Ե.: 1995թ., Մարկոսյան Ա.Խ. Սեփականաշնորհման սերտիֆիկատների մասին / Խորհուրդներ արժեթղթերի ներկա և ապագա տերերին / Եր., 1995թ., Մարկոսյան Ա.Խ., Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը. Տեսության և պրակտիկայի հարցեր,- Ե.: 1995թ.: Մարկոսյան Ա.Խ., 222 հարցի պատասխան սեփականաշնորհման մասին,- Ե.: 1996թ., Մարկոսյան Ա.Խ., Պետությունը և շուկան,- Ե.: 2000թ., Մարկոսյան Ա., Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև,- Ե.: 2004թ., Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները,- Ե.: 2005թ., Մարկոսյան Ա.Խ. Տնտեսագիտություն բոլորի համար,- Ե.: 2006թ.:

մը Հայաստանի անկախության, պետական ինքնիշխանության հաստատման և ապահովման կարևորագույն երաշխիքներից է<sup>1</sup> և այլն:

Հայաստանի երրորդ հանրապետության սոցիալ-քաղաքական բնույթի հիմնահարցերին է իր հետազոտություններում անդրադարձել Ա. Թադևոսյանը<sup>2</sup>: Սույն հետազոտության առունձով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հրապարակումներում հեղինակի արտահայտած այն տեսակետը, որ հանրապետությունում խորացող աղքատությունը, դադարելով զուտ սոցիալական բնույթի երևույթ լինելուց, մեր ուսումնասիրության խնդրո առարկա ժամանակահատվածում, ոչ միայն խոչընդոտել է անկախ պետականության հաստատման գործընթացին, այլև նույնիսկ վտանգել է իր ինքնիշխանությունը կերտող հասարակության վերարտադրությունը ընդհանրապես<sup>3</sup>:

Առեմախոսության հիմնախնդրի լուսաբանման առունձով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև այլ առանձին հեղինակների ու հեղինակային խմբերի տակավին անցման փուլում գտնվող Հայաստանի երրորդ հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող ուսումնասիրությունները<sup>4</sup>:

Հանրապետությունում լույս են տեսել նաև ատեմախոսության մեջ քննարկվող ժամանակաշրջանում նորանկախ Հայաստանի կայացման գործընթացի որոշ հարցերի նվիրված, հրապարակախոսական բնույթի հրապարակումներ և քաղաքագիտական ուղղվածությամբ աշխատանքներ, որոնցում ևս բնականաբար, խնդրո առարկա հիմնահարցը պատմագիտական համապարփակ ուսումնասիրության չի ենթարկվել<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները,- Ե.: 2005թ., էջ 7:

<sup>2</sup> Թադևոսյան Ա., Արժեքային գործընթացները և միտումները 1991-1998 թվականներին.- Ե.: 2000թ., Թադևոսյան Ա., Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից.- Ե.: 2003թ.:

<sup>3</sup> Թադևոսյան Ա., Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից.- Ե., 2003թ., էջ 5:

<sup>4</sup> Մամիկոնյան Հ.Ս., ՀՀ գյուղատնտեսական արտադրության հիմնախնդիրները.- Ե.: 1997թ., հոշաբեկյան Վ.Ե., Ջրափոխության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում.- Ե.: 1998թ., Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում. տնտեսություն և արդյունքներ, խմբագրական կոլեգիա Աղանբեգյան Ա., Սկրտչյան Մ., Քերոզյան Մ.- Ե.: 1999թ., Մանասերյան Թ., Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծերը: Ազգային տնտեսության զարգացման հիմնական առաջնահերթությունները.- Ե.: 2000թ., Գաբրիելյան Ո., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն).- 2001թ., Գաբրիելյան Մ., Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում.- Ե.: 2001թ., Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Ե.: 2002թ., Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում.- Ա.: 2002թ., Կիրակոսյան Գ., Անցումային տնտեսության վերափոխումները: Տեսության հարցեր.- Ե.: 2002թ., Անանյան Լ.Զ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր.- Ե.: 2003թ., Արտագաղթը Հայաստանից (խմբ. Տ. Խառատյան, Ազգագրական հետազոտությունների կենտրոն.- Ե.: 2003թ., Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ., Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում.- Ե.: 2003թ., Մարկոսյան Ա., Սաթևոսյան Է., Պետությունը և ձեռնարկատիրությունը.- Ե.: 2005թ., Մարկոսյան Ա., Քերամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում.- Ե.: 2006թ.:

<sup>5</sup> Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը, Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր.- Ե.: 1999թ., Սարգսյան Կ., Պետական սկիզբ և ազգային շարունակություն.- Ե.: 1999թ., Բաղդատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին.- Ե.: 2000թ.: Դռնոյան Լ., երրորդ հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամը.- Ե.: 2002թ., Հովսեփյան Ս., ՀՀԿ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը.- Ե.: 2002թ., Մանուկյան Վ., Հայկական երազանքը զոյատևման փակուղում: Ելույթների և հողվածների ժողովածու / Կազմող Լ. Հակոբյան և ուրիշներ.- Ե.: 2002թ., Մանուկյան Վ., Գնացքից թռչելու ժամանակն է: Հողվածների ժողովածու / Խմբագիր Լ. Խուրդյան, Ա.

Քաղաքագիտության ոլորտին վերաբերող արժեքավոր գիտական հետազոտություն է Գ. Քեռյանի «Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը» ուսումնասիրությունը, որում հեղինակը, կուսակցությունների դասակարգման հիմնահարցերի տեսական վերլուծության ֆոնի վրա անդրադառնալով նորանկախ Հայաստանում բազմակուսակցական համակարգի կայացմանը, լուսաբանել է երկրում համեմատաբար երիտասարդ կուսակցությունների ձևավորման ընթացքը, վերլուծել նրանց որդեգրած քաղաքական արժեքներն ու ծրագրերը, ներկայացրել կուսակցությունների դերակատարությունը անկախության կայացման գործընթացում: Աշխատանքում հեղինակը, մասնավորապես, հանգել է այն կարևոր հետևությանը, որ քաղաքական կյանքում բազմակուսակցական գոյավիճակի առկայությունը Հայաստանում, հնարավորություն ընձեռեց խՍՀՄ փլուզումից հետո խուսափել ինչպես անիշխանության քաոսից, այնպես էլ բռնատիրության ճիրաններից<sup>1</sup>:

Ծիշտ է Հայաստանի երրորդ հանրապետության կայացման առանձին հարցեր քննարկվել են նաև պատմության գծով պաշտպանված որոշ ատենախոսություններում<sup>2</sup>,

---

Հարությունյան /.- Ե.: 2002թ., Բագրատյան Յ., Հայաստանը դարերի սահմանագծին,- Ե.: 2003թ., Հայաստան 1998-2007 / Խմբագիր Ա. Վարդանյան,- Ե.: 2008թ., Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը (համառոտ ուրվագծեր),-Ե.: 2012թ.:

<sup>1</sup> Քեռյան Գ., Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը,- Ե.: 2002թ., էջ 264:

<sup>2</sup> Տողանյան Վ., ԱՊՀ կազմավորումը և հայ-ռուսական հարաբերությունները (1991-1995թթ.).

Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երևան, 1996թ., Ազյան Վ., Ղարաբաղյան ու տարածաշրջանային մյուս զինված հակամարտությունները Անդրկովկասում և Ռուսաստանի Ղաշնությունը (1991-1994թթ.). Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2001թ., Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2002թ., Շահնազարյան Ա., Հայ-վրացական հարաբերությունները հետխորհրդային շրջանում (1991-1999թթ.). Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երևան, 2002թ., Կարապետյան Ա., Հայ-հունական հարաբերությունները 1991-1998թթ.-ին. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցելու համար, Երևան, 2004թ., Մալխասյան Ց., Հայ-ֆրանսիական հարաբերությունները 1991-2001 թվականներին. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2004թ., Անանյան Ա., Հայոց ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004թթ.). Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2005թ., Մալեքյան Լ., Հայ-իրանական պատմամշակութային կապերն արդի էտապում. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2005թ., Մանուկյան Ժ., Հայաստանի Հանրապետությունը ԱՊՀ ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում (1995-2001թթ.). Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երևան, 2006թ., Մարտիրոսյան Տ., Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ու ռազմավարության ձևավորման գործընթացը 1991-2002թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2006թ., Մելիքյան Ա.Յ., Հայաստանի Հանրապետություն - Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000 թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2007թ., Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքացիությունը հարավային Կովկասում 1991-2001թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2008թ., Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թեթիսըը Հայաստանի Հանրապետություն-Վրաստան հարաբերությունների համատեքստում (1980-ական թթ. վերջ – 2003թ.), Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2010թ., Վարդյան Մ., Ազրարային վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1991-2000թթ., Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2011թ., Демоян Г.А. Карабахский конфликт и Турция. Историко-сравнительный анализ. Диссертация на соискание ученой степени доктора исторических наук, Ереван 2012:



սակայն նրանցից և ոչ մեկում սույն աշխատանքի խնդրո առարկա հիմնահարցը չհամ-  
դիսանալով այդ աշխատությունների հետազոտության օբյեկտը, ամբողջական և համա-  
կողմանի գիտական ուսումնասիրության չի ենթարկվել:

Այսպիսով, «Անկախ պետականության հաստատման և զարգացման գործընթացը  
Հայաստանում 1990-2001թթ.» հետազոտությունը քննարկվող ժամանակահատվածում  
Հայաստանի երրորդ հանրապետությունում անկախ պետականության ձևավորման բազ-  
մաբնույթ գործընթացի հնարավորինս համակարգված լուսաբանման ու պատմաքննա-  
կան վերլուծության առաջին համեստ փորձն է:

### **Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությու-  
նից, օգտագործված սկզբնաղբյուրների, գրականության ցանկից և բովանդակությունից:  
Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 405 էջ:

**ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ** մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, ցույց են տրված ա-  
տենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, նշված են հետա-  
զոտության նպատակներն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, տրված է  
հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

### **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՈՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱ- ՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՍԿԻՉԲԸ**

#### **Առաջին ենթագլուխ - Հասարակությունը արմատական վերափոխումների շեմին**

Խորհրդային Միությունում 1985 թվականից ծավալված գորբաչովյան վերակուցումը  
հնարավորություն ընձեռեց հարապակայնացնելու մինչ այդ խիստ արգելիքի տակ  
գտնվող այն տեսակետներն ու գաղափարները, որոնք խորհրդային համայնատիրական  
հասարակարգի երկար ու ծիգ տարիների դառը փորձից էին բխում:

Այդ շրջանում տնտեսության ոլորտում իրականացվող վերափոխումներն սկսեցին  
ուղղակիորեն կապվել քաղաքական նոր մոտեցումների և ընդհանրապես նոր մտածո-  
ղության հետ: Վարչակառավարական նոմենկլատուրայի, կուսակցական վերնախափի  
կամայականությունների անասելի չափերի հասնող կոռուպցիայի և այլ անօրինակա-  
նությունների պայմաններում հասարակության մեջ օրըստօրե խորանում էր սոցիալիզմի  
նկատմամբ անվստահությունը<sup>1</sup>: ԽՍՀՄ փլուզմանը անմիջականորեն նախորդած ժամա-  
նակահատվածում երկրում մեծ ծավալներ ընդունած հակախորհրդային տրամադրու-  
թյունները ունեին նաև իրենց հոգեբանական շարժառիթները: Ինչպես խորհրդային կայս-  
րության հասարակական-քաղաքական կյանքում, այնպես էլ տնտեսության մեջ ա-  
նըրևակայելի արագությամբ ահագնացող բացասական երևույթները հաղթահարելու  
միակ ուղին հասարակական կյանքի բոլոր ոլորտների դեմոտրատացումն էր<sup>2</sup>:

Ստեղծված իրավիճակում երկրի տարբեր հատվածներում ձևավորվեցին լարվա-  
ծության օջախներ: ԽՍՀՄ-ում, որտեղ ապրում էին 100-ից ավելի ազգեր ու ազգություն-  
ներ, առանձնակի սրվեց ազգային հարցը<sup>3</sup>: Լեռնային Ղարաբաղի համար սկսված համա-  
ժողովրդական շարժումը աստիճանաբար լայնացնելով իր շրջանակները, նրանում նո-  
րանոր խնդիրներ ընդգրկելով ի վերջո վերածվեց նաև Հայաստանի անկախության հա-  
մար պայքարի<sup>4</sup>:

<sup>1</sup> Содружество независимых государств:десять лет спустя (1991-2001), Минск 2001, с.11.

<sup>2</sup> Գորբաչով Մ.Ս., Վերակառուցումը և նոր մտածողությունը մեր երկրի և ամբողջ աշխարհի  
համար, Եր. 1988, էջ 130:

<sup>3</sup> Սինալյան Է, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում  
(1990-2003թթ.), Եր.- 2003, էջ 17:

<sup>4</sup> Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետ՝ Հ.Ա.Ա.) ֆ. 1679, ց.1, գ.13, ք.2-3:

Խորհրդային հասարակությունում համակարգային արգելակման դրսևորումները արձանագրվել էին տակավին 1960-ականների կեսերին<sup>1</sup>: Քննարկվող ժամանակահատվածում դրությունն էլ ավելի էր վատթարացել: Հասունացել էր կյանքի ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ տնտեսական հարաբերությունների արմատական վերափոխման խնդիրը<sup>2</sup>: Սոցիալիստական հասարակարգի առաջնորդները ջանում էին այս անգամ էլ տնտեսական զարգացման օրինաչափությունները հարմարեցնել համայնավարական հասարակարգը ամեն գնով պահպանելու իրենց նպատակադրումներին: Իսկ եթե նկատի ունենանք, որ հենց համայնավարությունն էր ԽՍՀՄ-ի գոյության առհավատչյան, ապա միանգամայն պարզ է դառնում, որ այդ արվում էր Խորհրդային կայսրությունը ու այդպիսով նաև սոցիալիզմի համաշխարհային ողջ համակարգը պահպանելու համար<sup>3</sup>:

Բնականաբար միութենական կենտրոնի այդ ձեռնարկումներում մյուս հանրապետությունների հետ ներգրավված էր նաև Խորհրդային Հայաստանը<sup>4</sup>: Սակայն առանց Հայաստանի քաղաքական կարգավիճակի արմատական վերափոխման, ինչպես հետագայում ապացուցեց զարգացման փորձը, անհնար էր ակնկալել ինստիտուցիոնալ բնույթի որևէ տեղաշարժ տնտեսության բնագավառում: Ձեռնարկված կիսատ-պռատ միջոցառումները, բնականաբար, ինչպես ողջ երկրում, այնպես էլ Հայաստանում, որևէ շոշափելի դրական արդյունք չտվեցին: Արդյունաբերության ոլորտում ճգնաժամը գնալով խորանում էր<sup>5</sup>:

Ամենալուրջ վերափոխումների կարիք ուներ նաև Խորհրդային տնտեսության թերևս ամենախցոցելի ոլորտը՝ գյուղատնտեսությունը, որում ավելի քան ակնառու էին դրսևորվում սոցիալիստական արտադրատեղանակի քաղաքականացվածության բացասական հետևանքները:

Խորհրդային Հայաստանում մշակովի ցանքատարածությունների ընդամենը 6,3% զբաղեցնող անձնական օժանդակ տնտեսություններում արտադրվում էր գյուղատնտեսական հիմնական մթերքների ավելի քան կեսը<sup>6</sup>:

Առաջիններից մեկը դեռևս գոյատևող ԽՍՀՄ-ում գյուղատնտեսության վերակառուցման փորձեր ձեռնարկվեցին Հայկական ԽՍՀ-ում: Մասնավորապես 1990 թվականի ապրիլի սկզբներին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության կողմից հանրության քննարկմանը ներկայացվեց «Հայկական ԽՍՀ-ում գյուղացիական տնտեսության մասին» օրենքի նախագիծը<sup>7</sup>, որը ևս մեկ անհաջող փորձ էր համատեղելու համայնավարական սկզբունքները շուկայական տնտեսաձևի հետ: Ինչպես Խորհրդային Միության անխտիր մյուս բոլոր հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում սոցիալիզմը պատած համընդհանուր ճգնաժամից ձերբազատվելու միակ իրատեսական ուղու՝ տնտեսական և հասարակական կյանքի ազատականացման գործընթացի իրականացումը հնարավոր էր բացառապես ազգային ինքնիշխան պետականության պայմաններում:

---

<sup>1</sup> О созыве очередного XXIII съезда КПСС. Об улучшении управления промышленностью, совершенствованию планирования и усилении экономического стимулирования промышленного производства. Постановления пленума ЦК КПСС, приняты 29 сентября 1965 года.-М.: 1965г. С. 7-11:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետություն, 17 դեկտեմբերի 1992թ.:

<sup>3</sup> Խորհրդային Հայաստան, 27 մարտի 1990թ.:

<sup>4</sup> Նույն տեղում, 4 ապրիլի 1990թ.:

<sup>5</sup> Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարի նյութերը, Երևան, 1986թ., էջ 314:

<sup>6</sup> Գաբրիելյան Ս., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Երևան 2001թ., էջ 13:

<sup>7</sup> Խորհրդային Հայաստան, 18 ապրիլի 1990թ.:

## **Երկրորդ ենթաբաժնի - Անկախության հռչակագրի ընդունումը և Հայաստանի փաստա- կան անկախացման ընթացքը:**

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից 70 տարի անց պատմությունը կրկին ազատատենչ հայ ժողովրդին հնարավորություն ընձեռեց կերտել իր ազգային անկախ պետականությունը: Այդ ժամանակահատվածի քաղաքական մաքառումների արդյունքում ձևավորված մնայուն հուշարձաններից է, անշուշտ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1990 թ. օգոստոսին ընդունված Հայաստանի անկախության հռչակագիրը<sup>1</sup>: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի օգոստոսի 4-ի որոշմամբ բարձրագույն օրենսդիր մարմնի պատգամավորներից ստեղծվել էր Հայաստանի անկախության հռչակագրի նախապատրաստման 15-հոգանոց հանձնաժողով<sup>2</sup>: Գե օգոստոսի 6-ի որոշմամբ էլ ձևավորվել էր ընդունվելիք հռչակագրից բխող սահմանադրական փոփոխություններ մշակող հատուկ աշխատանքային հանձնաժողով<sup>3</sup>: Հանձնաժողովի կողմից ինքնուրույն աշխատանքի արդունքում ձևավորված, ինչպես նաև տարբեր քաղաքական ուժերի կողմից ներկայացված տարբերակների թիվը շուտով հասավ մեկ տասնյակի<sup>4</sup>: 1990 թ. օգոստոսի 20-ին հանձնաժողովը Գերագույն խորհրդին ներկայացրեց նոր, միասնական տարբերակը<sup>5</sup>:

Այսպիսով Հայաստանի քաղաքական կարգավիճակի մասին հռչակագրի ընդունման գործընթացը մոտեցավ իր վերջնագծին: Սկսվեց ըստ էության հռչակագրի մանրագնին քննարկման փուլը: Մինչ այդ առաջին հայացքից ոչ խնդրահարույց թվացող շատ ձևակերպումներ ու ամբողջ դրույթներ օրենսդիր մարմնի քաղաքական ուժերի համար դարձան իսկական հայեցակարգային պայքարի առարկա<sup>6</sup>: Գերագույն խորհրդի օգոստոսի 23-ի պատմական նիստում ազգային արժեքներին հավատարիմ քաղաքական ուժերի ճնշման տակ ձայների մեծամասնությամբ ի լրումն հռչակագրի՝ արդեն խորհրդարանի կողմից հավանության արժանացած դրույթների, ավելացվեց նաև թվով 11-րդ կետը, որում արձանագրված էր. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»<sup>7</sup>: Կատարվածը փաստորեն հանրապետությունում իշխանությունը դեռ նոր ստանձնած ՀՀՇ ուժերի դեմ այդ օրերին բարձրագույն իշխանական մարմնում Գերագույն խորհրդում, ընդդիմության առաջին լուրջ դրսևորումն էր:

1990 թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհուրդը իրականացրեց պատմական կարևոր քայլ՝ ազգային պետականության կորստից 70 տարի անց հռչակելով անկախ Հայաստանի կայացման սկիզբը<sup>8</sup>: Հռչակագիրը սկսվում էր հայ ժողովրդի համար դարակազմիկ փաստաթղթի բովանդակության պատմական բացառիկ նշանակության արձանագրմամբ. «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը... հռչակում է անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը»<sup>9</sup>: Հռչակագրի բացառիկ պատմական նշանակությունը նաև այն է, որ այդ փաստաթուղթը Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացը սահմանեց, որպես հասարակության կյանքի հասարարական-քաղաքական և սոցիալ-

<sup>1</sup> Խորհրդային Հայաստան, 25 օգոստոսի 1990 թ.:

<sup>2</sup> Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 15 (971), 23 օգոստոսի 1990 թ., էջ 11-12:

<sup>3</sup> Խորհրդային Հայաստան, 8, 9 օգոստոսի 1990 թ., Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 15 (971), 23 օգոստոսի 1990 թ., էջ 12-17:

<sup>4</sup> Խորհրդային Հայաստան, 10 օգոստոսի 1990 թ.:

<sup>5</sup> Նույն տեղում, 22 օգոստոսի 1990 թ.:

<sup>6</sup> Նույն տեղում, 9 օգոստոսի 1990 թ.:

<sup>7</sup> Նույն տեղում, 24 օգոստոսի 1990 թ.:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №16 (972), 31 օգոստոսի 1990 թ., էջ 4-6:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 4:

տնտեսական բնագավառներում իրականացվելիք արմատական ձեռնարկումների ամբողջություն: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը օգոստոսի 24-ին ընդունեց ՀՀ պետական դրոշի մասին օրենքը<sup>1</sup> և Գերագույն խորհրդի որոշմամբ հայտարարվեց պետական զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ<sup>2</sup>: Հայաստանի Հանրապետության կառավարության 1990 թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ հայտարարվեց ՀՀ զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ, որի անցկացման նպատակով, ընդունված որոշման համաձայն, ստեղծվեց բարձրաստիճան պաշտոնյաներից, գիտության, արվեստի, գրականության բնագավառի հեղինակավոր ներկայացուցիչներից կազմված 15 հոգանոց կազմկոմիտե՝ հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահի (Վ. Մանուկյան) զլխավորությամբ<sup>3</sup>: ՀՀ կառավարության 1990 թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ ստեղծվեցին Հայաստանի պետական զինանշանի և պետական օրհներգի մրցութային հանձնաժողովները<sup>4</sup>, որոնք էլ 1991 թ. հուլիսին և 1992 թ. մարտին ընդունեցին համապատասխանաբար ՀՀ հիմնն ու զինանշանը: 1996 թ. հունվարին Հայաստանի Հանրապետության պետական դրոշն ու զինանշանը Ինտելեկտուալ սեփականության համաշխարհային կազմակերպության՝ ՎԻՊՕ-ի կողմից ճանաչվեցին, որպես ՀՀ սեփականություն<sup>5</sup>:

### **Երրորդ ենթագլուխ - Անկախության հանրաքվեն և Հայաստանի պետական ինքնիշխանության հռչակումը:**

Անկախության հռչակագրի ընդունումը ընդամենը Հայաստանի կողմից անկախացման ուղու որդեգրման փաստաթուղթ էր և ըստ էության անկախացման գործընթացի սկզբնավորման իրավաբանական ձևակերպումը: Իսկ Հայաստանի փաստական քաղաքական անկախացումը դեռևս ապագայի գործ էր, որին հասնելու ճանապարհին, ինչպես ցույց տվեց պրակտիկան, հայ ժողովրդին դեռևս լուրջ փորձություններ էին սպասում: Բնականաբար հաղթահարվելիք խոչընդոտներից շատերի ակունքները ձգվում էին անկախության մասին հռչակագրին նախորդած ժամանակաշրջանից: Այսպես, կանխազգալով ԽՍՀՄ մոտալուտ փլուզման վտանգը, Միության առաջին և վերջին նախագահ Մ. Գորբաչովը տակավին 1990 թ. ապրիլի 3-ին ստորագրեց «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը<sup>6</sup>: Այդ փաստաթուղթը, ըստ էության ԽՍՀՄ հիմնական օրենքի վրա հենվելով, սահմանադրորեն միութենական հանրապետությունների հնարավոր անկախացումը կանխելու փորձ էր:

Հայաստանի նկատմամբ կենտրոնի ճնշումները հատկապես ուժեղացան անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո: Հայաստանի Հանրապետության, քնույթով արդեն ժողովրդավարականացած իշխանությունները վարում էին ազգային ինքնիշխանության հաստատմանը միտված կանխամտածված, ծրագրավորված քաղաքական կուրս, աստիճանաբար անցում էին կատարում կենտրոնի նկատմամբ, իրավական առումով, հարձակողական գործելաոճին<sup>7</sup>:

Որքան որոշակիանում էր ԽՍՀՄ մոտալուտ փլուզման ուրվապատկերը, այնքան ավելի տենդագին էին դառնում կայսրությունը փրկելու կամ գոնե մի անորոշ ժամանակով նրա

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №15 (971), 23 օգոստոսի 1990 թ., էջ 6:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 418, թ. 1-3:

<sup>4</sup> Նույն տեղում, գ. 417, թ. 1-5:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետություն, 17 հունվարի 1996 թ.:

<sup>6</sup> Известия советов Народных депутатов СССР, 7 апреля 1990 г.

<sup>7</sup> James P. Nichol, Diplomacy in the Former Soviet Republics. New York 1995, p. 150, Հայաստանի Հանրապետություն 2 փետրվարի 1991 թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր №5 (985), 15 մարտի 1991 թ., էջ 3:

վախճանը երկարածգելու կենտրոնի գործողությունները<sup>1</sup>: 33 Գերագույն խորհուրդը 1991 թ. մարտի 1-ին որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին»: 1991 թ. մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով կազմելու մասին որոշում<sup>2</sup>: Մինչև հանրաքվե կենտրոնական հանձնաժողովը ամսական գումարում էր առնվազն երկու միստ<sup>3</sup>, որոնցում քննարկվում էին կայանալիք հանրաքվեի հետ կապված ամենատարաբնույթ հարցեր:

1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, հիմնվելով սեպտեմբերի 21-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքների վրա, ընդունեց Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին պատմական որոշում<sup>4</sup>: 1991 թ. սեպտեմբերի 25-ին 33 Գերագույն խորհուրդը ընդունեց «Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք անկախ պետականության հիմնադրյալների մասին»<sup>5</sup> պատմական փաստաթուղթը, որով Հայաստանը հայտարարվեց անկախ ժողովրդավարական պետություն: Հավատարիմ մնալով սահմանադրական ուղով անկախացման սկզբունքներին՝ Հայաստանի իշխանությունները որոշեցին կենտրոնի հետ սկսել ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցով բանակցությունները<sup>6</sup>:

1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելոռուսի մայրաքաղաք Մինսկի մոտակայքում՝ Բելովեժյան բնակավայրում, Բելոռուսի Հանրապետության, Ռուսաստանի Ֆեդերացիայի և Ուկրաինայի ղեկավարների կողմից ստորագրվեց անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) ստեղծելու մասին համաձայնագիրը<sup>7</sup>: Ըստ էության հենց այդ համաձայնագիրն էլ դարձավ ԽՍՀՄ-ի միանգամյա փլուզման ակտը: Փաստերը միանգամայն որոշակիորեն հաստատում են, որ ինչպես ԽՍՀՄ մյուս բոլոր հանրապետությունները, այնպես էլ Հայաստանը դժվար թե կարողանային առանձին-առանձին անկախանալ, համենայն դեպս արդեն հայտնի պատմական ժամանակահատվածում, եթե խորհրդային Միության փլուզումը չլիներ համընդհանուր՝ կրելով միանգամյա քաղաքական ակտի բնույթ: ԱՊՀ-ի քաղաքական կայացումը տեղի ունեցավ դեկտեմբերի 21-ին, Ղազախստանի այն ժամանակվա մայրաքաղաք Ալմա Աթայում:

#### **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

#### **ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

#### **ՆՊԱՏԱԿԱՆՈՒԴՐԱԾ ՄԻՋՑՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**Առաջին ենթաբաժնի - Տնտեսական կացության առանձնահատկությունները Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացի սկզբնավորման շրջանում**

**Առաջին ենթավերնագիր - Տնտեսության կազմալուծման ընթացքի քաղաքականացվածությունը**

Անկախ պետականության հաստատման ուղով ընթացող Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր իր առաջին քայլերը կատարել գտնվելով տնտեսական ծայրահեղ ծանր կացության մեջ: Ստեղծված անմխիթար իրավիճակն ուներ իր ինչպես օբյեկտիվ,

<sup>1</sup> Верн Н. История советского государства: 1900-1991.- М.: 1998 с. 509.

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №10 (990), 31 մայիսի 1991 թ., էջ 12-13

<sup>3</sup> Նույն տեղում, №17 (997), 15 սեպտեմբերի 1991 թ., էջ 34-35, №18 (998), 30 սեպտեմբերի 1991 թ., էջ 28-29:

<sup>4</sup> Նույն տեղում, №18 (998), 30 սեպտեմբերի 1991 թ., էջ 21:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 10-12:

<sup>6</sup> Նույն տեղում, №19 (999), 15 հոկտեմբերի 1991 թ., էջ 4, ՀԱԱ, ֆ. 113, ց. 166, գ. 539, թ. 1:

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետություն, 10, 13 դեկտեմբերի 1991 թ.:

այնպես էլ սուբյեկտիվ պատճառները:

Հայաստանի տնտեսական վիճակի վատթարացմանը մեծապես նպաստում էին աղետի գոտու առկայությունը, արցախյան պատերազմն ու հանրապետության շրջափակված վիճակը: Սակայն այդ բոլորի հետ մեկտեղ հանրապետության տնտեսական կացության վատթարացման գործում էական էին նաև հեղափոխական ու նախ և առաջ արցախյան ազատագրական պայքարի ալիքի վրա հասարակության քաղաքական կյանքի առաջավոր բնագծերում հայտնված որոշ քաղաքական ուժերի կողմից թույլ տրված սխալները, որոնց համար նախադրյալները հատկապես առկա էին քաղաքական բնագավառում: ՀՀ-ն, դեռևս իշխանության գալուց առաջ, իր քաղաքական պայքարում առանձնահատուկ դեր էր հատկացրել հանրապետության արդյունաբերական հզորությունների փակման համար ծավալված գործընթացին<sup>1</sup>:

Անդրադառնալով երբեմնի ինդուստրիալ Հայաստանի տնտեսության փոշիացման ձեռնակերտ նախադրյալներին անպայման անհրաժեշտ է նշել, որ դրանցում չափազանց մեծ էր ընդհանուր ժողովրդավարական զարգացումների արդյունքում հասարակական կյանքի առաջավոր բնագծերում հայտնված որոշ նորաթուխ ուժերի կողմից հանուն իշխանության մղվող պայքարում քաղաքական շահարկումների դերը<sup>2</sup>:

Հանգամանքների բերումով Հայաստանի քաղաքական թատերաբեմում հայտնված որոշ ուժեր, հանուն իրենց խմբային նպատակների շուտափուրջ իրականացման, նենգափոխելով փաստերը, ամենևին հաշվի չենտեղծվել ժողովրդի համար իրենց գործողությունների հնարավոր ծանր հետևանքների հետ, մոլորեցնելով ժամանակին արցախյան արդար դատի գաղափարներով ոտքի ելած հանրությանը՝ ի վերջո կարողացան քայքայել, ըստ մարդկային զարգացման համաթվի, 1990 թվականի ցուցանիշներով, աշխարհի զարգացած երկրների շարքում, պատվավոր 47-րդ տեղը զբաղեցնող<sup>3</sup>, երբեմնի ինդուստրիալ հանրապետության տնտեսությունը: Պայմաններ ստեղծվեցին ոչ այնքան հեռու ապագայում Հայաստանը խավարի և գործազրկության մեջ ընկնելու համար:

Հանուն արդարության հարկ է նշել, որ հատկապես արցախյան խնդրում ԽՍՀՄ - կենտրոնական իշխանությունների վարած ընդգծված հակահայ քաղաքականությունը նրանց նկատմամբ խորատելություն էր սերմանել հայաստանյան հասարակության բոլոր շերտերում: Նման պայմաններում կենտրոնի դեմ ձեռնարկված քաղաքական, տնտեսական և այլ բնույթի ցանկացած քայլ պարզապես ժողովրդի մոտ ընկալվում էր որպես այդ պահին հայոց ազգային կենսական խնդիրների իրագործմանը խոչընդոտող ուժերին հասցվող հակահարված և բնականաբար արժանանում նրա հավանությանը<sup>4</sup>:

Որպես ասվածի լավագույն ասպցույց կարող է ծառայել այդ շրջանում Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման ճակատագիրը: Հայոց Հանազգային շարժման որոշ գործիչների անմիջական ջանքերով 1989 թ. դեկտեմբերին, Հայաստանի արդյունաբերական հսկայի գործունեությունը դադարեցվեց<sup>5</sup>: «Նաիրիտի» և փակված մյուս մեծ ու փոքր ձեռնարկությունների ճակատագրից չկարողացավ խուսափել նաև հայկական էներգետիկայի հսկան՝ Մեծամորի ատոմակայանը<sup>6</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 26, թ. 2, գ. 27, թ. 23:

<sup>2</sup> Ազիզբեկյան Ռ.Լ., Գեղամյան Գ.Մ., Հայաստանը 1945-1990-ական թվականներին, Եր, 1994թ., էջ 89, Հայաստանի Հանրապետություն, 1 հոկտեմբերի 1993թ.:

<sup>3</sup> Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999, Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում.- Եր., 1999թ., էջ 18:

<sup>4</sup> Армения: проблемы независимого развития / Под общ. ред. Е.М.Кожокина.- М.: 1998, с 76.

<sup>5</sup> Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության զերագույն խորհրդի տեղեկագիր, № 1 (957), 15 հունվարի 1990 թ., էջ 6:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 169, գ. 160, թ. 1, Հայաստանի Հանրապետություն, 14 ապրիլի 1993 թ., 23 ապրիլի 1999 թ.:

Նման կերպ փակվեցին առաջատար շատ ձեռնարկությունները ևս<sup>1</sup>:

Իրողությունն այն է, որ ԽՍՀՄ-ի փլուզման նախօրյակին ընդդիմադիր ուժերը, փակելով ձեռնարկությունները, ցանկացել են հեշտացնել ամենամոտ ապագայում իշխանությունը վերցնելու գործընթացը: Համայնավարական իշխանությունների դեմ պայքարող ուժերի կողմից տնտեսական հիմնախնդիրներին որոշ դեպքերում մատների արանքով նայելու հանգամանքին էապես նպաստեցին նաև շուկայական տնտեսության արմատավորման արևմտյան որոշ տեսությունների անքննադատ կիրառման փորձերը Հայաստանում, մի հազամանք, որը մշտապես հերքվել է ՀՀՀ-ական իշխանությունների կողմից<sup>2</sup>:

### **Երկրորդ ենթավերնագիր - Շրջափակումը և էներգետիկ ճգնաժամը Հայաստանում**

Ատոմակայանի անգործության պայմաններում հատկապես ծանր կացություն էր ստեղծվել հանրապետության էներգոհամակարգում<sup>3</sup>:

Աղբբեջանական կողմը չհապաղեց օգտվել ստեղծված իր համար նպաստավոր կացությունից: Արդեն 1990 թվականի ապրիլին ընթանում էր շրջափակման չորրորդ փուլը<sup>4</sup>: Դեռևս ԽՍՀՄ գոյության պայմաններում աղբբեջանական շրջափակման հետևանքով գրեթե լիովին աշխատանքները դադարեցրեցին Հայաստանի բազմաթիվ ձեռնարկություններ<sup>5</sup>: 1990 թվականի հունվարից մինչև հունիս ամիսը ամբողջությամբ վերցրած հանրապետության արդյունաբերությունը աշխատաժամանակի ավելի քան 60 տոկոսը գործել է շրջափակման պայմաններում<sup>6</sup>:

Անմիջապես նկատելով տնտեսական ու նախ և առաջ էներգետիկ ծանր կացության մեջ հայտնված Հայաստանի շրջափակման շոշափելի արդյունքները՝ աղբբեջանական կողմը այն դարձրեց իր պայքարի կարևորագույն միջոցներից մեկը: Այնքան նշանակալի էր շրջափակման և հատկապես էներգետիկ շրջափակման կազմալուծող ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա, որ այդ ընթացքում ծագող ամենաբազմաբնույթ ու անկանխատեսելի խնդիրներին ինչ-որ կերպ լուծում տալու նպատակով ՀՀ կառավարությունում ստեղծվեց «Տնտեսական շրջափակման պայմաններում հանրապետության բնակչության և ժողովրդական տնտեսության ապահովման կենտրոնական հանձնաժողով» պետնախարարի գլխավորությամբ<sup>7</sup>: Քիչ թե շատ նորմալ գործող երկաթուղային ու ավտոմոբիլային ճանապարհներն անցնում էին Վրաստանով, որը ևս հաճախ քողարկված ու բացահայտ ձևերով օգտագործվում էր Հայաստանի վրա Աղբբեջանի կողմից տնտեսական ճնշումը ուժեղացնելու համար<sup>8</sup>:

Միայն 1992 թվականի հունվարից մինչև հունիս ամիսը Հայաստանը սնուցող միակ երկաթուղին<sup>9</sup> չէր գործել ավելի քան 56 օր<sup>10</sup>: Երկաթուղիների և ավտոճանապարհների շրջափակումներն ու գազատարի պայթեցումները հատկապես անելանելի կացություն

---

<sup>1</sup> Խոջաբեկյան Վ., Ջբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Եր., 1998, էջ 130-131:

<sup>2</sup> Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Երևան, 2003թ., էջ 39-40, Социально-политические воззрения И. Шумпетера. Реферативный сборник, А.Б. Волков (отв.за вып.).- М.: 1989г., с.91.

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 23 (1027), 15 դեկտեմբերի 1992թ., էջ 24-26:

<sup>4</sup> Խորհրդային Հայաստան, 29 մայիսի 1990թ.:

<sup>5</sup> Նույն տեղում, 22 ապրիլի 1990թ.:

<sup>6</sup> Նույն տեղում, 29 մայիսի 1990թ.:

<sup>7</sup> Խորհրդային Հայաստան, 12 դեկտեմբերի 1991թ.:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Հայաստանի Հանրապետություն, 14 հունվարի 1992թ.:

<sup>10</sup> Նույն տեղում, 30 հունիսի 1992թ.:

էին ստեղծել Հայաստանի էներգետիկ համակարգում<sup>1</sup>: Վառելիքաէներգետիկ հաշվեկշռում ներմուծվող վառելիքի քանակը հայկական ԱԷԿ-ի անգործության պայմաններում կազմում էր 95%<sup>2</sup>: Նորանկախ Հայաստանի համար էներգետիկ ներքին ռեսուրսների կատարյալ բացակայության պայմաններում իսկական պատուհաս էին դարձել Կենտրոն-Հյուսիսային Կովկաս-Վրաստան-Հայաստան գազամուղի նկատմամբ Հայաստանի սահմանին մոտեցող, հիմնականում աղբբեջանաբնակ տարածքներում, որոշ դեպքերում նույնիսկ վրացական իշխանությունների թողտվությամբ իրականացվող ահաբեկչական գործողությունները<sup>3</sup>: 1992 թվականի ապրիլ ամսին, հիմնականում էներգետիկ շրջափակման հետևանքով նորանկախ Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը արձանագրեց 55% անկում<sup>4</sup>: Նույն թվականի մարտ ամսվա տվյալներով էլեկտրականության բացակայության պատճառով նախկինում արդյունաբերական արտադրության մեջ ակտիվորեն ներգրավված շուրջ 350 հազար մարդ գտնվել էր հարկադիր պարապուրդի մեջ<sup>5</sup>:

Էներգետիկ սղության պատճառով հանրապետությունում ստեղծված ծանրագույն կացությունը ստիպում էր իշխանություններին ձեռնարկելու տնտեսական կազմակերպչական, վարչական և այլ բնույթի կտրուկ քայլեր՝ իրավիճակը ինչ-որ կերպ շտկելու համար: Բնականաբար, անկման այս ընդհանուր համապատկերի վրա սաստկացավ բնակչության սոցիալական վիճակը: 1993 թվականին 1992 թվականի համեմատությամբ պարենային ապրանքների գները աճել էին 108,7 անգամ<sup>6</sup>: 1993 թվականի գարնան վերջին հանրապետությունում անկախացումից հետո իրենց գործունեությունը, ճիշտ է, որոշ ընդհատումներով, բայց այնուամենայնիվ շարունակած 400 ձեռնարկություններից աշխատում էին ընդամենը 50-ը<sup>7</sup>: Միանգամայն հասկանալի է, որ տնտեսության նման անկման պատճառը գլխավորապես հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալների աննախադեպ նվազումն էր:

Այն ծանրագույն կացությունը, որում հայտնվել էր Հայաստանի Հանրապետությունը, գերազանցապես գազատարի պայթեցումների հետևանքով էլ ավելի էր ոգևորում Աղբբեջանական կողմին: 1993-ից մինչև 1995 թ. ներառյալ ընկած ժամանակահատվածում Հայաստան մտնող գազատարի վրացական հատվածում ագերիների կողմից իրականացվել էին ավելի քան 40 խոշորամասշտաբ պայթեցումներ<sup>8</sup>: 1992-1995 թթ. ընկած ժամանակահատվածում 34 անգամ էլ վնասարարության էր ենթարկվել Հայաստան մտնող երկաթգիծը, ներառյալ Խրամ գետի՝ Վրաստանը Հայաստանին կապող երկաթուղային կամրջի 7 պայթեցումները<sup>9</sup>: 1990-ականների սկզբին ՀՀ իշխանությունների համար ավելի քան պարզ էր, որ բոլոր պարագաներում միայն ատոմակայանի վերագործարկումով էլ հնարավոր չսկսել է էներգահամակարգի ու ողջ տնտեսության վիճակը<sup>10</sup>: Եվ ի վերջո 1995 թ. նոյեմբերի 5-ին, շուրջ 6 տարվա պարապուրդից հետո ատոմակայանը Հայաստանի մշտական թերբեռն-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ.113, ց.167, գ.186, թ. 4:

<sup>2</sup> Նույն տեղում, ց.165, գ. 638, թ. 1:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետություն, 13 մայիսի 1993թ.:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ.113, ց.167, գ.186, թ. 2:

<sup>5</sup> Նույն տեղում, գ.186, թ. 5:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետություն, 24 փետրվարի 1994թ.:

<sup>7</sup> Նույն տեղում, 19 մայիսի 1993թ.:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական բաժին (այսուհետ՝ ՀՀ ԱԳՆ ՊԴԲ), ց. 1, գ. 232, թ. 65, Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Եր., 2000, էջ 50:

<sup>9</sup> Հայաստանի Հանրապետություն, 23 մայիսի 1995 թ.:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 638, թ. 1-5, գ. 166, գ. 611, թ. 1, գ. 168, գ. 5, թ. 1-2:



վածությանը տառապող և անկանոն գործող միացյալ էներգետիկ համակարգին սկսեց մատակարարել էլեկտրականության առաջին չափաբաժինը<sup>1</sup>:

Շուկայական հարաբերությունների համաշխարհային տնտեսական համակարգում տակավին իր նորամուտը արձանագրած ԴԴ-ի համար նրա տնտեսական երկու հսկաները «Նաիրիտը» և Մեծամորի ԱԷԿ-ը դարձան միջազգային հանրության մեջ Հայաստանի ներուժի հուսալիության ու կայունության յուրօրինակ գրավականը<sup>2</sup>:

1990-ականների 2-րդ կեսից արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկումը ԴԴ-ում դարձավ նպատակային գերինդիք<sup>3</sup>: Տակավին 1994 թ. առաջին կիսամյակից հանրապետությունում նկատվեցին մակրոտնտեսական կայունացման միտումներ<sup>4</sup>:

Ընդհանուր առմամբ տնտեսական հարաբերական առաջխաղացումները, իհարկե որոշ վայրիվերումներով, զգալի էին նաև հետագա տարիներին:

**Երկրորդ ենթաբաժին - Անկախ պետականության հաստատմանը միտված շուկայական հարաբերությունների ձևավորման յուրահատկությունները**  
**Առաջին ենթավերնագիր - Անկախ պետականության հաստատման և զարգացման նպատակադրմամբ պայմանավորված արդյունաբերության սեփականաշնորհման ընթացքի արագացումը**

Ազգային լիակատար ինքնիշխանության հաստատման կարևորագույն նախապայմաններից էր, ժողովրդի կենսական շահերից բխող տնտեսական շրջադարձային ձեռնարկումների հնարավորինս կարճ ժամկետներում իրականացումը հանրապետությունում: Մասնավոր սեփականության վրա հիմնված շուկայական արտադրատարաբերությունների հաստատումը, օբյեկտիվորեն, միակ ուղին էր Հայաստանի լիակատար անկախացման համար<sup>5</sup>: Տնտեսության մասնավորեցումը հրամայական անհրաժեշտություն էր նաև անկախ ու ինքնիշխան հայկական պետության, տնտեսական առումով, շուկայական արժեքների վրա խարսխված համաշխարհային հանրության մեջ ներգրավվելու համար: Հայաստանի քաղաքական անկախացմամբ երկրում կյանքի կոչված շուկայական տնտեսակարգը կոչված էր իր հետագա կայացմամբ էլ ավելի ամրապնդելու ԴԴ-ում ազգային, անկախ ինքնիշխանությունը:

Այդ առումով ամենևին էլ պատահական չէր, որ հանրապետությունում շուկայական տնտեսական համակարգ ստեղծելու նպատակով առաջին որոշումներն ավելի շատ ունեին ԴԴ-ում ազգային պետական ինքնիշխանության ամրապնդմանն ու հետագա զարգացմանը միտված քաղաքական փաստաթղթերի բնույթ<sup>6</sup>:

Կառավարության կողմից ընդունվեցին նոր որոշումներ սեփականաշնորհման գործընթացի ղեկավար օղակների, վերափոխումների ընթացքի կազմակերպման մասին<sup>7</sup> և այլն: ԴԴ Ֆերագույն խորհրդի 1992 թ. օգոստոսի 27-ին ընդունած «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքով սահմանվեցին Հայաստանում արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերությունների նպատակային փոխակերպման կազ-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետություն, 7 նոյեմբերի 1995 թ.:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 175, գ. 19, թ. 1, գ. 22, թ. 1-2:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետություն, 3, 12 նոյեմբերի 1998 թ., 26 մարտի, 14 հուլիսի 1999 թ., 30 սեպտեմբերի, 12 հոկտեմբերի 2000 թ.:

<sup>4</sup> Երկիր, 10 դեկտեմբերի 1994թ., Հայաստանի Հանրապետություն, 1 սեպտեմբերի 1994 թ.,:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետության Ֆերագույն խորհրդի տեղեկագիր, №16 (972), 31 օգոստոսի 1990 թ., էջ 5:

<sup>6</sup> Նույն տեղում, №17 (973), 15 սեպտեմբերի 1990 թ., էջ 22-23, №20 (976), 31 հոկտեմբերի 1990 թ., էջ 24-38:

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետություն, 20 հոկտեմբերի 1990 թ., ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 537, թ. 1-2, գ. 567, թ. 1-2, գ. 165, գ. 156, թ. 1-13:

մակերակարան-իրավական հիմքերը<sup>1</sup>: Սերտիֆիկատների միջոցով սեփականաշնորհման գործընթացի իրավական դաշտը ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից միայն 1994-1995 թթ. ընդունվել էր 13 որոշում<sup>2</sup>:

Փաստորեն հանրապետությունում հասարակական բարիքի վերաբաշխումը իրականացվել էր դեռևս մինչև սեփականաշնորհումը: Ամենակարճ ժամանակահատվածում աղքատության եզրին հայտնված մարդիկ արդեն հասցրել էին բաժանվել իրենց սերտիֆիկատներից՝ դրանք չափազանց էժան գներով գիջելով հիմնականում պաշտոնական դիրքի չարաշահմամբ ու կոռուպցիայով հարստացած անհատների մի շատ փոքր խմբի: Ազգային հարստության վայրագ թալանի գործում ոչ վերջին դերը պատկանում էր ՀՀԾ-ական իշխանություններին: Բավական է միայն հիշել, թե ինչպես սերտիֆիկատներին տիրացած հանրապետության ազգաբնակչության մի աննշան մասը կազմող սոցիալական շերտի հարստությունը միանգամից կրկնապատկվեց, մասնավորեցման ընթացքը հնարավորինս արագացնելու նպատակով, ՀՀ կառավարության 1995 թվականի որոշմամբ վաուչերների արժեքի բարձրացման արդյունքում<sup>3</sup>: Գերազանցապես հենց դրա հետևանքով սեփականաշնորհման ամենաբարձր ցուցանիշները արձանագրվեցին հիշյալ որոշմանը անմիջականորեն հաջորդած տարիներին՝ 1996-1997թթ.<sup>4</sup>:

Սեփականաշնորհման ամբողջ ընթացքում գործընթացի թերևս ամենախոցելի կողմը մնում էր մասնավորեցվող օբյեկտների դիմաց դրանք ձեռք բերողների կողմից կատարած վճարումների բացահայտ անհամապատասխանությունն այդ հիմնարկ-ձեռնարկությունների իրական արժեքներին<sup>5</sup>, ինչպես նաև մասնավորեցման ընթացքում ըստ էության մրցակցության բացակայությունը<sup>6</sup>: 1995 թ. մինչև 2000-ականների առաջին տարիները հանրապետությունում «միջին» և «խոշոր» ձեռնարկություններից յուրաքանչյուրի մասնավորեցման համար միջինը վճարվել է ոչ ավելի, քան 150 հազար ԱՄՆ դոլար<sup>7</sup>:

Հարկ է նշել, որ պետական ունեցվածքի մասնավորեցման բնագավառում ստեղծված նման իրավիճակի հիմնական պատճառներից մեկն էլ մասնավորեցվող օբյեկտների արժեքային գնահատման կարգն էր, որի մասին որոշումը կառավարության կողմից ընդունվել էր դեռևս 1994 ապրիլի 21-ին<sup>8</sup>: Սեփականաշնորհումը օր առաջ ավարտելու հրամայականով պայմանավորված հապճեպորեն ընդունված որոշումը, ըստ էության, նման բարդ գործընթացը ուղղորդող փաստաթղթի համար չափազանց փոքրածավալ էր և այդ հարցին անչափ ընդհանուր մոտեցումներով կառուցված, հենց որն էլ պարարտ հող էր ստեղծում չարաշահումների համար:

Սեփականաշնորհման նկատմամբ հասարակության մեջ և իշխանական շրջաններում քաղաքականացված մոտեցումներն էին, հիմնականում, որ պայմանավորեցին մասնավորեցման նկատելիորեն արագ տեմպերը և պատճառ դարձան այդ գործընթացում դրսևորված օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի մեծ ու փոքր սխալների: Սեփականաշնորհման ա-

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ.15-16 (1019-1020), օգոստոս 1992 թ., էջ 4-50:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տեղեկագիր, հ. 7-8 (1107-1108), ապրիլ 1996 թ., էջ 35:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>4</sup> Մարկոսյան Ա., Մաթևոսյան Ե., Պետությունը և ձեռնարկատիրությունը, Եր., 2005թ., էջ 76:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 175, գ. 88, թ. 2, գ. 89, թ. 2, գ. 200, թ. 1, գ. 249, թ. 1, գ. 281, թ. 1, գ. 320, թ. 1, գ. 395, թ. 1:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №20 (152), 4 հուլիսի 2001 թ., էջ 16-22:

<sup>7</sup> Մարկոսյան Ա., Մաթևոսյան Ե., Պետությունը և ձեռնարկատիրությունը, Եր., 2005, էջ 76:

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 171, գ. 175, թ. 1-10:

րագ տեմպերը պայմանավորված էին նաև դրսի թելադրանքով<sup>1</sup>:

### **Երկրորդ ենթավերնագիր - Քաղաքականացված մտտեցումների գերակայությունը ագրարային ոլորտի մասնավորեցման գործընթացում**

Սեփականաշնորհման գործընթացի քաղաքական երանգավորումը թերևս առավել ակնառու կերպով դրսևորվեց գյուղատնտեսության մասնավորեցման ընթացքում:

Հարցի պրակտիկ լուծումը սկսվեց 1991թ. հունվարի 22-ին ՀՀ ԳԽ-ի ընդունած «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքով<sup>2</sup>: 1991թ. հունվարի 28-ին գյուղատնտեսության սեփականաշնորհման մասին օրենքի ընդունումից ընդամենը հաշված օրեր անց հողային ռեֆորմի և սեփականաշնորհման կենտրոնական պետական հանձնաժողովի ընդլայնված նիստում արդեն արձանագրվել էր, որ հանրապետության տարածքի մեծ մասում, այդքան կարճ ժամանակահատվածում, ձևավորվել էին մասնավորեցման շրջանային հանձնաժողովները, որոշ շրջանների մի շարք տնտեսություններում հաջողությամբ ընթանում էր հողի փորձնական սեփականաշնորհումը և այլն<sup>3</sup>: Այդ ձեռնարկումները միաժամանակ ամենայն որոշակիությամբ մեկ անգամ ևս - հաստատում են ագրարային ոլորտի սեփականաշնորհման ընթացքի քաղաքականացվածությունը հանրապետությունում, ամեն գնով արագորեն ազգային ինքնիշխանություն հաստատելու քաղաքական ղեկավարության անկասելի ձգտումը: Ագրարային ոլորտի մասնավորեցման գործընթացի արագացված տեմպերի վկայությունն է նաև այն, որ ընդամենը երկու տարուց քիչ ավելի տևած գյուղատնտեսության սեփականաշնորհման ընթացքում այդ նպատակով Հայաստանի կառավարությունն ընդունեց շուրջ 250 որոշում, որոնք բոլորը միասին կազմում էին ավելի քան 10 հազար էջ<sup>4</sup>:

Գյուղատնտեսության մասնավորեցման գործընթացի քաղաքականացված բնույթը ավելի քան անթաքույց էր: Այսպես՝ ՀՀ վարչությունը հատուկ լիազորագրերով հանրապետության բոլոր գյուղական բնակավայրեր ուղարկեց իր ներկայացուցիչներին, որոնց որոշակի ցուցում էր տրված ոչ այնքան հետևելու գյուղատնտեսության սեփականաշնորհման ընթացքում օրինականության պահպանմանը, որքան հնարավորինս արագացնելու մասնավորեցման բուն գործընթացը:

Սեփականաշնորհման անչափ արագ տեմպերի խոսուն վկայությունն է այն, որ սեփականաշնորհման մասին օրենքի ընդունումից ընդամենը 9 ամիս անց հանրապետության 800-ից ավելի հանրային տնտեսություններից արդեն լուծարվել էր 713-ը, որոնց փոխարեն այդ կարճ ժամանակահատվածում արդեն հասցրել էին ստեղծվել մոտ 164 հազար 500 անհատական և 11 հազար 600 կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ, մասնավորեցվել էր մոտ 345 հազար հա ընդհանուր տարածքով հողահանդակ<sup>5</sup>, իսկ ագրարային ոլորտի մասնավորեցման ողջ ընթացքում, որը սկսվել էր 1991 թվականից և շարունակվելով հիմնականում ավարտվել հաջորդ 2 տարիներին, հանրապետությունում ձևավորվել էին 319 հազ. 300 գյուղացիական և 300 կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ<sup>6</sup>: 1992 թվականի տվյալներով սեփականաշնորհվել էր անասունների ընդհանուր գլխաքանակի 88 տոկոսը<sup>7</sup>:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետություն, 6 ապրիլի 1995 թ.:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №2 (982), 31 հունվարի 1991թ., էջ 6-19:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետություն, 29 հունվարի 1991թ.:

<sup>4</sup> Նույն տեղում, 20 մայիսի, 1995թ.:

<sup>5</sup> Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Պետությունը և ձեռնարկատիրությունը, Եր.- 2005թ., էջ 69, Հայաստանի Հանրապետություն, 12 նոյեմբերի 1991թ.:

<sup>6</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, վիճակագրական ժողովածու, Երևան 1998թ., էջ 259, Հայաստանի Հանրապետություն, 20 մայիսի 1995թ.:

<sup>7</sup> Содружество независимых государств: в 2002 году. Статический ежегодник« Москва 2003г., с. 249£

Շտապողականության արդյունքում առանց վերահսկման համապատասխան մեխանիզմների կիրառման իրականացված սեփականաշնորհման, հետևանքով, հատկապես 1992-1993 թվականներին տեղի ունեցավ անասունների զանգվածային մորթ<sup>1</sup>:

Չնայած անասունների գլխաքանակի նվազումը հաջողվեց կասեցնել հիմնականում 1994-1995 թվականների ընթացքում<sup>2</sup>, սակայն ինչպես խոշոր եղջերավորների, այնպես էլ ոչխարների գլխաքանակը հետագայում այդպես էլ լրջորեն չվերականգնվեց<sup>3</sup>:

Չողօգտագործման ծավալի նվազումը մեծապես կապված էր մասնավորեցման արդյունքում հողային ֆոնդի մանրատման հետ<sup>4</sup>: Գլխավորապես գյուղում մասնավորեցման տեմպերի արհեստականորեն արագացման հետևանքով 1991-1996 թվականների ընթացքում հանրապետությունում մշակովի ցանքատարածությունները 437,1 հազար հեկտարից կրճատվեցին մինչև 346,6 հազար հեկտար<sup>5</sup>:

Գյուղատնտեսության բնագավառում արտադրության տեմպերի որոշակի կայունացմամբ բնութագրվող 1994 թվականին գյուղատնտեսական համախառն արտադրանքը նախորդ տարվա համեմատ աճել էր 3,2%-ով<sup>6</sup>: 1990-ականների կեսերին արդեն նկատվող դրական միտումները մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով հետագա զարգացում չստացան, դանդաղեցին և նույնիսկ կանգ առան<sup>7</sup>:

1997 թվականից տնտեսության բնագավառում ՀՀ իշխանությունների իրականացրած արմատական վերափոխումները նպաստեցին նաև գյուղատնտեսության զարգացմանը<sup>8</sup>:

Հայաստանի Հանրապետությունում հանրային ունեցվածքի սեփականաշնորհումն իր բոլոր բացթողումներով ու սխալներով հանդերձ, նպատակային առումով, հիմնականում լուծեց շուկայական հասարակարգին անցման կարևորագույն հիմնախնդիրը՝ նախկինում բացառապես պետությանը պատկանած արտադրության միջոցների մասնավորեցման հարցը: Այսպես, արդեն 2000 թ. սկզբներին հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 80 տոկոսից ավելին ապահովվել էր հանրապետության տնտեսության մասնավոր հատվածի գործունեության հաշվին<sup>9</sup>:

### **Երրորդ ենթավերնագիր - Անկախության համակողմանի կայացման գործընթացով պայմանավորված տնտեսական այլ բնույթի ձեռնարկումները ՀՀ-ում**

Հայաստանի կողմից իր անկախության նվաճմանը անմիջականորեն հաջորդած շրջանում տնտեսության մեջ իրականացված արմատական ձեռնարկումների ընթացքում հաճախ իշխանական օղակների կողմից թույլ տրված կոպիտ սխալների արդյունքում հանրապետությունում ծայրահեղորեն սրվել էր սոցիալական կացությունը:

---

<sup>1</sup> Գաբրիելյան Մ. Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն), Եր.-2001թ., էջ 18:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետություն, 9 մարտի 1995թ.:

<sup>3</sup> Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք 2001 (1997,1998), Երևան 2001թ., էջ 275, Հայաստանի Հանրապետություն, 18 մարտի 1997թ.:

<sup>4</sup> Գաբրիելյան Մ. Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր.-2001թ., էջ 27, Հայաստանի Հանրապետություն, 18 մարտի 1997թ.:

<sup>5</sup> ՀՀ վիճակագրություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995-1996թթ., Եր.-1998թ., էջ 261:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետություն, 31 դեկտեմբերի 1994թ.:

<sup>7</sup> Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998, Պետության դերը, Եր.- 1998թ., էջ 8, Հայաստանի Հանրապետություն, 7 մայիսի 1998թ.:

<sup>8</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Եր.-2001թ., էջ 291, Հայաստան, 1998-2007, հմբ. Ա.Վարդանյան, Եր.-2008, էջ 20:

<sup>9</sup> Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Պետությունը և ձեռնարկատիրությունը, Եր., 2005, էջ 67:

Հանրապետության հատկապես ֆինանսական ոլորտում իրականացված ինստիտուցիոնալ բնույթի վերակառուցումները, անշուշտ, խորքային առումով հանդիսանալով Հայաստանի ինքնիշխանության հետագա ծավալմանը ուղղակիորեն նպատակաուղղված քայլեր՝ միաժամանակ ամենամիջակաճան ազդեցություն ունեցան ՀՀ այդ շրջանի սոցիալական կացության վրա:

Հանրապետությունում իրականացված գների ազատականացումն սկսվեց 1992 թ. հունվարից և ավարտվեց 1996 թ.<sup>1</sup>:

Հանրապետությունում ծայր առած տնտեսական վերափոխումների համակարգում շուկայական ազատ զնազոյացմանն անցման քայլի առաջանցիկությունը ընթացող սեփականության ձևերի փոփոխության նկատմամբ դարձավ հնարավորինս խտացված ժամանակահատվածում «տենդագին» գնաձի<sup>2</sup> հետևանքով ազգաբնակչության սոցիալական առանց այն էլ անմխիթար վիճակի էլ ավելի վատթարացման պատճառով:

1993թ. ապրիլի 27-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի<sup>3</sup> կիրարկումը ապահովեց Հայաստանում ամբողջական անկախ բանկային համակարգի ձևավորումը՝ Հայաստանի կենտրոնական բանկի գլխավորությամբ: Հանրապետության ֆինանսավարկային համակարգում համեմատաբար թերևս ամենակայացած օղակի բանկային համակարգի վերաբերյալ 1993 թվականից մինչև 2001 թվականը ընդունվել էին համակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը միտված 9 կարևորագույն բնույթի օրենքներ<sup>4</sup>, ինչպես նաև բազմաթիվ որոշումներ:

Վստահաբար պետք է արձանագրել, որ նշված բոլոր ձեռնարկումները, այդ թվում՝ նաև ազգային դրամի հիմնումը ամենևին էլ պատահական երևույթ չէին: Ազգային դրամի ստեղծման ուղղությամբ աշխատանքները ծավալվել էին հանրապետությունում դրամի կիրառման մասին որոշում ընդունելուց զգալիորեն ավելի վաղ<sup>5</sup>:

Արդեն գոյություն ունեցող ազգային հերալդիկայի՝ դրոշի, զինանշանի, օրհներգի կողքին ազգային դրամը դարձավ նորանկախ Հայաստանի Հանրապետության պետական ինքնիշխանության անձնագրային նշանակության խորհրդանիշներից ևս մեկը:

Անկախ պետականության ձևավորմանը միտված վարչական բնույթի կարևորագույն միջոցառումներից էր Հայաստանի Հանրապետության նախագահի 1992թ. հունվարի 4-ի հրամանագրով ստեղծված ՀՀ մաքսային վարչությունը<sup>6</sup>: Հանրապետության կառավարության 1992թ. մարտի 2-ի որոշման համաձայն հանրապետությունում գործում էին Երևանի «Զվարթնոց» և «Էրեբունի» օդանավակայանների, ինչպես նաև Բավոայի, Գոգարանի, Բազարատաշենի և Այրումի ժամանակավոր մաքսային կետերը<sup>7</sup>:

Խնորո առարկա ժամանակահատվածում ընդունված մի շարք իրավական փաստաթղթերով հանրապետությունում քայլեր էին ձեռնարկվում նաև ֆինանսական շուկայի կարևորագույն բնագավառների՝ հասարակական կյանքում սոցիալական բացառիկ դերակատարություն ունեցող կենսաթոշակային, ապահովագրական, հարկային համակարգերի կայաց-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետություն, 27 փետրվարի 1996 թ.:

<sup>2</sup> Նույն տեղում, 13 հոկտեմբերի 1993 թ.:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Երևան – 1995թ., էջ 492-501:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 169, գ. 430, թ. 1-3, Բանկային գործունեության կանոնակարգում. Հայաստանի Հանրապետության օրենքները. - Ե., 2003թ., էջ 3-453: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 3-4 (1079-1080), փետրվար 1995թ., էջ 32-45, հ. 11-12 (1087-1088), հունիս 1995թ., էջ 37-51

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 239, թ. 1-6:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պաշտոնական տեղեկագիր, հ. 1-2 (1005-1006), հունվար 1992թ., էջ 27-28:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 68, թ. 1-3, գ. 134, թ. 1-2:

ման ուղղությամբ և այլն<sup>1</sup>: Ձեռնարկված քայլերը նպաստեցին նորանկախ Հայաստանի ինքնիշխանության ծավալմանն ու ամրապնդմանը:

## **ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

### **ԱՆՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՄՐՎՊՆԴԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

#### **Առաջին ենթազույգ - Ձեռնարկումները հասարակական-քաղաքական կյանքում:**

Անկախացմամբ սկիզբ դրվեց երկրի քաղաքական համակարգի վերափոխմանը: Անցման շրջանում Հայաստանի առջև ծառայած հիմնախնդիրներից էր հասարակական-քաղաքական կարգի ժողովրդավարականացումը: Նորանկախ Հայաստանի համար հասարակական կյանքի ազատականացումը միակ ուղին էր ինքնիշխանության հաստատման և ազգային անկախ պետականության հարատևման համար:

Ելնելով անկախության մասին հռչակագրի դրույթներից՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1990 թ. ընդունեց բնույթով բացառիկ ժողովրդավարական որոշում «Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պետական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու մասին»<sup>2</sup>, որով, փաստորեն դրվեց հասարակության մեջ ամեն տեսակի գաղափարական պարտադրանքի բացառման հիմնաքարը: Հայաստանի Գերագույն խորհուրդը 1991 թ. փետրվարի 26-ին ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»<sup>3</sup> օրենքը, որով Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում իրավաբանորեն ամրագրվեց բազմակուսակցականության սկզբունքը:

Օրենքի ընդունումը մեծ խթան հանդիսացավ հայ հասարակության մեջ ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկի քաղաքական կուսակցությունների և այլ տիպի հասարակական կազմակերպությունների ձևավորման համար: 2001 թ. Հայաստանում գրանցված էր շուրջ 100 կուսակցություն ու քաղաքական միավորում, ինչպես նաև փախստականների, զանգվածային լրատվության, մարդասիրական օգնության, գիտության և կրթության, մարդու իրավունքների, մշակույթի և սպորտի և այլ բնագավառների 2579 հասարակական կազմակերպություն<sup>4</sup>: Քննարկվող ժամանակահատվածում կուսակցությունները շատ հաճախ, արիեստականորեն համալրելով իրենց շարքերը, դադարել էին գաղափարների շուրջը համախմբված մարդկանց ընդհանրություն լինելուց և վեր էին անցնել ընտրություններ ապահովող կառույցների<sup>5</sup>:

Ազատական սկզբունքները նախ և առաջ կենսագործվեցին հենց խորհրդարանում: Արդեն 1995 թ. ամռանը առաջին խորհրդարանի 260<sup>6</sup> պատգամավորներից 142-ը ներկայացնում էին 18 կուսակցություն և այլ հասարակական-քաղաքական բնույթի կազմակերպություն: ՀՀ առաջին զումարման Գերագույն խորհրդի գործունեության ողջ ընթացքում խորհրդարանում գործել էին 12 պատգամավորական խումբ և 5 կուսակցական խմբակցություն<sup>7</sup>:

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 1-2 (1005-1006), հունվար 1992 թ., էջ 4-13, 22-43, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, հ. 23-24 (1123-1124), դեկտեմբեր 1996 թ., էջ 3-14:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №21 (977), 15 նոյեմբերի 1990 թ., էջ 7-8:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 115-118:

<sup>4</sup> Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2001. Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Եր., 2001, էջ 46:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Խորհրդային Հայաստան, 1 հուլիսի 1990 թ.:

<sup>7</sup> Ազգ, 11 մարտի 1992թ., Հայաստանի Հանրապետություն, 4 հուլիսի 1995 թ.:

Հայաստանի ներքաղաքական կյանքի նոր շրջանը որոշակիացավ 1994 թ. վերջերին և տևեց մինչև 1998 թ. սկիզբը՝ մինչև ՀՀ իշխանավարման իր երկրորդ փուլը իրականացնող ՀՀ առաջին նախագահի հրաժարականը, որը նշանավորվեց Հայաստանում ժողովրդավարության նկատելի սահմանափակմամբ<sup>1</sup>:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում, կարծեք, մշտական գրանցում ստացան պատվիրված քաղաքական դատավարությունները, ընդդիմության առաջնորդների ձերբակալությունները<sup>2</sup> և այլն:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ազատականացմանը միտված կարևոր իրավական փաստաթղթերից էր 1991 թ. հունիսի 17-ին Հայաստանի Գերագույն խորհրդի ընդունած «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը<sup>3</sup>: Ըստ էության հանրապետությանը յոթ տասնամյակ պարտադրված աթեիզմից հետո Հայաստանը, աշխարհում առաջինը պետականորեն քրիստոնեությունը ընդունած երկիրը, դարձ կատարեց դեպի իր հոգևոր ակունքները: Հոգևոր բաղադրիչը կրկին դարձավ պետական արարողակարգի անբաժան մասը<sup>4</sup>:

Ժողովրդավարության ուղին որդեգրած Հայաստանում խոսքի ազատության ճանապարհին կարևորագույն քայլ էր 1991 թ. հոկտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Մամուլի և զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքը, որով սահմանվեց, որ Հայաստանում զանգվածային լրատվության բոլոր միջոցներն այլևս ազատ էին և չէին ենթարկվելու գրաքննության<sup>5</sup>: Օրենքի ընդունումը լուրջ խթան հանդիսացավ հանրապետությունում զանգվածային լրատվամիջոցների գործունեության ակտիվացման համար: Կտրուկ ավելացավ դրանց թիվը<sup>6</sup>:

1996 թ. նախագահական ընտրություններից հետո ժողովրդի և իշխանությունների շուրջ մեկ և կես տարի տևած սուր առճակատունը հանգեցրեց 1998 թ. փետրվարին ՀՀ - նախագահի հրաժարականին<sup>7</sup>: Հայաստանում սկսվեց հասարակական-քաղաքական զարգացումների նոր փուլ<sup>8</sup>:

### **Երկրորդ ենթադրուխտ - Անկախ Հայաստանի պետական համակարգի ձևավորման գործընթացը:**

Խնդրո առարկա ժամանակահատվածում, բնականաբար, անկախ պետականության հաստատման հիմնահարցերի հետ ամենաուղղակիորեն կապված էր նորանկախ Հայաստանում իրականացվող պետականաշինությունը: Հայաստանում պետականության մա-

---

<sup>1</sup> ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց. 1, գ. 192, թ. 107-111, Հայաստանի հանրապետություն, 1 հունվարի 1995 թ.:

<sup>2</sup> Ազգ, 7 հուլիսի 1995թ., Հայաստանի Հանրապետություն, 8 հուլիսի 1995 թ., 11 դեկտեմբերի, 6 մարտի, 18 ապրիլի, 18 հունիսի, 10 հոկտեմբերի 1996 թ.:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 136-140:

<sup>4</sup> Խոհրդային Հայաստան, 21 հուլիսի 1990 թ., 7 օգոստոսի 1990 թ., Հայաստանի Հանրապետություն, 1 հոկտեմբերի 1991 թ., 12 նոյեմբերի 1991 թ., 12 նոյեմբերի 1996 թ., 10 ապրիլի 1998 թ., 16 մայիսի 2000 թ.:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 19 (999), 15 հոկտեմբերի 1991 թ., էջ 4-13:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետություն, 14 հուլիսի 1993 թ., 17 փետրվարի 1994 թ., 8 սեպտեմբերի 1994 թ.: Սարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը, Եր., 1998, էջ 38, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 13-14 (1089-1090), 20 հուլիսի 1995 թ., էջ 3:

<sup>7</sup> Ազգ 24, 25 սեպտեմբերի 1996թ., Հայաստանի Հանրապետություն, 26 սեպտեմբերի 1996 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №4 (37), 24 փետրվարի 1998 թ., էջ 33:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №10 (43), 15 մայիսի 1998 թ., էջ 22:

կարողակով ինքնիշխանության ձևավորումը փաստորեն սկսվեց 1990 թ. կայացած խորհրդարանական ընտրություններով<sup>1</sup>:

Գերագույն խորհրդի գործունեության շրջանակները սահմանվեցին 1991 թ. նոյեմբերի 19-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքով<sup>2</sup>: Ի դեպ այդ փաստաթղթում առաջին անգամ ամրագրված էր, որ հանրապետության խորհրդարանը մշտապես գործող իշխանական մարմին էր: Յուրաքանչյուր նոր խորհրդարանի ձևավորումը ըստ եւթյան իրենով նշանավորում էր անկախ Հայաստանի ինքնիշխանության վերարտադրության ու հետագա ծավալման մի նոր փուլ: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1995 թ. մարտին ընդունված օրենքով ձևավորվելիք հաջորդ խորհրդարանը վերանվանվեց ՀՀ Ազգային ժողովի<sup>3</sup>: Այդ օրենքով Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի լիազորությունների ժամկետը սահմանվեց 4 տարին և Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացների պրակտիկայում ամրագրվեց համամասնական ընտրակարգը<sup>4</sup>:

Ըստ եւթյան խնդրո առարկա ժամանակահատվածում Հայաստանի խորհրդարանի ընդունած իրավական փաստաթղթերի գերակշռող մասն ուղղակիորեն կամ էլ անուղղակի նպատականդված էր ՀՀ անկախ պետականության հաստատմանը: Այդ բնույթի էր ՀՀ ԳԽ կողմից 1991 թ. օգոստոսի 1-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքը<sup>5</sup>: Ելնելով ինքնիշխան պետության կայացման գործընթացի արագացման շահերից, սահմանելով հանրապետության նախագահի պաշտոնը՝ Հայաստանի խորհրդարանը նրան զիջեց իր լիազորությունների մի մասը<sup>6</sup>: 1991 թ. կայացած նախագահական ընտրությունների արդյունքում նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ ընտրվեց Լ. Տեր-Պետրոսյանը<sup>7</sup>: Հանրապետությունում ձևավորված կիսանախագահական կառավարման համակարգի կայացման կարևորագույն հանգրվան էր 1998 թ. իշխանափոխությունը:

Անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետության իշխանական համակարգում իրականացված վերափոխումները նպատականդված էին ազատական հասարակարգին բնորոշ կառավարման նոր համակարգի ձևավորմանը անկախ պետականության հաստատմանը: Անկախ պետականության հաստատման գործում իր ներդրումն ուներ կառավարման համակարգի յուրաքանչյուր օղակ: Սակայն հարևանի կողմից պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի համար նախնական փուլում առավել կարևոր էր ուժային կառույցների ու նախ և առաջ զինված ուժերի կայացումը: Այդ ուղղությամբ գործնական քայլեր էին իրականացվում տակավին 1990 թ. սկզբներից<sup>8</sup>:

Պետական ինքնիշխանության որակապես նոր մակարդակ էր նշանավորում հայոց բանակի համալրման նպատակով ՀՀ նախագահի 1992 թ. ապրիլի 18-ի հրամանագրով հանրապետությունում իրականացված առաջին զորակոչը, որը ընթացավ 1992 թ. մա-

---

<sup>1</sup> Fedrich - Ebert – Stiftung – South Caucasus - 20 Years of Independence, Munich, 2011, p. 46, խորհրդային Հայաստան, 22 մայիսի 1990 թ.:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 22 (1002), 30 նոյեմբերի 1991 թ., էջ 3-10:

<sup>3</sup> Նույն տեղում, № 6 (1082), 31 մարտի 1995 թ., էջ 3:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 3-4:

<sup>5</sup> Նույն տեղում, № 15 (995), 15 օգոստոսի 1991 թ., էջ 4-9:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետություն, 20 հունվարի 1996 թ.:

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 20 (1000), 30 հոկտեմբերի 1991 թ., էջ 31:

<sup>8</sup> Խորհրդային Հայաստան, 12 մայիսի, 9, 19 հոկտեմբերի 1990 թ., Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր № 9 (965), 15 մայիսի 1990 թ., էջ 10-11, ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 398, թ. 1-3:



յիս-հունիս ամիսներին<sup>1</sup>: Այդ գործընթացը հաջողությամբ ղեկավարում էին առաջին անգամ սեփական բանակը համալրելու նպատակով ձևավորված զորակոչային կենտրոնական ու բժշկական հանձնաժողովները<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետության նախագահի 1991 թ. դեկտեմբերի 14-ի հրամանագրով նախկինում գործած պետական անվտանգության կոմիտեն (ՊԱԿ) վերակառուցվեց ազգային անվտանգության պետական վարչության<sup>3</sup>:

Անկախացումից հետո, կապված հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, վարչական և այլ բնագավառներում իրականացվող արմատական վերափոխումների հետ, էական վերակառուցումներ տեղի ունեցան նաև հանրապետության ինքնիշխանության երաշխավորը հանդիսացող օղակներից ևս մեկում՝ ոստիկանությունում<sup>4</sup>: ՀՀ խորհրդարանի կողմից 2001 թ. ապրիլի 16-ին ընդունվեց «Ոստիկանության մասին օրենքը»<sup>5</sup>: Նշված փաստաթղթով էլ կատարվեց ներքին գործերի կառույցի անվանափոխությունը:

Անկախ պետականության հաստատման նպատակով Հայաստանում իրականացված պետաիրավական վերափոխումների շարքում, անշուշտ, իր ուրույն տեղն ունի պետական ինքնիշխանության կարևորագույն բաղկացուցիչներից մեկի՝ սահմանադրության ընդունումը<sup>6</sup>:

Խնդրո առարկա ժամանակահատվածում անկախ պետականության հաստատմանը միտված կարևորագույն պետաիրավական բնույթի ձեռնարկումներից էր, պետական կառավարման ապակենտրոնացման ժողովրդավարության կարևորագույն սկզբունքի իրականացման նպատակով հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը<sup>7</sup>:

Պետաիրավական համակարգում իրականացված կարևորագույն քայլերից էր հանրապետությունում շուկայական հարաբերություններին հարիր և նրա հետագա ծավալմանը նպաստող իրավահարաբերությունների ձևավորումը: Հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի աղբյուրների ընդունման հետ մեկտեղ բնականաբար ձևավորվեց նաև ՀՀ դատական համակարգը<sup>8</sup>:

Պետական իշխանության համակարգի կարևորագույն բաղկացուցիչների՝ կառավարման համակարգի և օրենսդրական դաշտի կայացման հետ աստիճանաբար ձևավորվում էր նաև իշխանության լիներխության հաջորդ կարևոր բաղադրատարրը՝ պետական ծառայության համակարգը<sup>9</sup>:

Անկախ Հայաստանի պետականաշինության առումով չափազանց կարևոր քայլ էր

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 8 (1012), 30 ապրիլի 1992 թ., էջ 37:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 248, թ. 1-2:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №24 (1004), 31 դեկտեմբերի, 1991 թ., էջ 46:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №12, 5 հունիսի 1997 թ., էջ 172-181:

<sup>5</sup> Նույն տեղում, №15 (147), 31 մայիսի 2001 թ., էջ 28-49:

<sup>6</sup> Ազգ. 8 հուլիսի 1995 թ.:

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Եր., 1999, էջ 423-443:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №15(48), 27 հուլիս 1998 թ., էջ 28-36, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2000. Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը, գործողություն հանուն առաջընթացի, Եր., 2000, էջ 51:

<sup>9</sup> Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2001 թ., գիրք Դ, Եր., 2001, էջ 785-811:

նաև նորաստեղծ պետության քաղաքացիությունը հավաստող անձնագրերի ներդրումը<sup>1</sup>: Ինքնիշխան պետականության հունանիտար ոլորտին վերաբերող այդ մոտիվի հետագա զարգացումը եղավ ՀՀ Ազգային ժողովի 1995 թ. նոյեմբերի 16-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի<sup>2</sup> ընդունումը և այլն:

Պետական ինքնիշխանության ծավալման և խորացման ընթացքը թերևս առավել ակնառու դրսևորվեց նաև Հայաստանի պետական տոնացանկի և հիշատակի օրերի սահմանման հարցում<sup>3</sup>:

### **ՊԼՈՒՏ ԶՈՐՐՈՐԴ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

### **ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՆՈՒՅԹԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

### **Առաջին ենթաբաժին - Արտաքին աշխարհի հետ անմիջական**

### **առնչությունների հաստատման սկզբնական քայլերը**

### **անկախացմանը նախորդող շրջանում**

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների 1990 թվականի կատարյալ ժողովրդավարության պայմաններում կայացած ընտրությունների արդյունքում ձևավորված ազատական, ըստ էության ռեալ ուժ ունեցող միակ իշխանական մարմնի կողմից որպես անկախացման ուղիով ընթացող Հայաստանի գերակայություններից մեկը հռչակվեց աշխարհի հետ ուղղակի արտաքին կապերի հաստատումը<sup>4</sup>: Դեռ անկախացման փուլում գտնվող Հայաստանի ժողովրդավարական ալիքի վրա իշխանության հասած ուժերը անուն էին հնարավոր՝ աստիճանաբար սաղմնավորվող ազգային ինքնիշխանության այդ կարևոր բաղկացուցիչը ևս կյանքում կենսագործելու համար: Տակավին 1990 թվականի վերջերից Հայաստանը հետևողականորեն որդեգրել էր միութենական հանրապետությունների հետ ուղղակի, առանց կենտրոնի որևէ միջամտության անմիջական կապերի հաստատման ուղին<sup>5</sup>:

ԽՍՀՄ վերջնական կազմալուծումից ավելի քան մեկ տարի առաջ միութենական հանրապետություններում արդեն ընթանում էր միմյանց միջև անմիջական հորիզոնական կապերի հաստատմամբ ինքնիշխանության տակավին սաղմնավորման գործընթացը: Այդ ուղիով ընթացողներից առաջինների մեջ էր նաև Հայաստանը: Խորհրդային Միության փլուզմանը անմիջականորեն նախորդած շրջանում Հայաստանի Հանրապետությունը հատկապես ակտիվացրել էր մյուս հանրապետությունների հետ ներկայացուցչական մակարդակով փոխհարաբերությունների հաստատումը<sup>6</sup>: Անկախության հռչակագրի ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության ինքնուրույն գործելաոճը որոշ դեպքերում հանգեցնում էր կենտրոնի հետ մույնիսկ ուղղակի քաղաքական առճակատման:

Հենց սկզբից առկա էր նաև ՀՀ իշխանությունների սերտ համագործակցությունը փլուզվող միության ժողովրդավարական ուժերի հետ<sup>7</sup>: Անկախության ուղիով ընթացող Հայաստանը հենց այս շրջանից առաջնորդվելով հասարակական պատասխանատվության խոր գիտակցմամբ, ամենակտիվ կերպով արձագանքում էր վերափոխումներով անչափ հարուստ այդ ժամանակահատվածի քիչ թե շատ էական տնտեսական, քաղա-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետություն, 16 սեպտեմբերի 1994 թ.:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, №8 (1098), 30 նոյեմբերի 1995 թ., էջ 2-10:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №27 (159), 20 օգոստոսի 2001 թ., էջ 58-59:

<sup>4</sup> Խորհրդային Հայաստան, 9 օգոստոսի, 1990թ.:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետություն, 25 նոյեմբերի, 1990թ.:

<sup>6</sup> Նույն տեղում, 16 սեպտեմբերի, 1990թ.:

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետություն 15 հունվարի, 1991թ.:

քական և այլ բնույթի իրադարձություններին, որտեղ էլ որ դրանք կատարվեին<sup>1</sup>:

Դեռ մինչև անկախության հանրաքվե և պաշտոնապես Հայաստանի ինքնիշխանության հռչակումը հաճախացել էին տարբեր մակարդակների օտարերկրյա պատվիրակությունների այցերը հանրապետություն, որն ըստ էության անկախացման ուղին բռնած Հայաստանի իրավունքների յուրօրինակ ճանաչումն էր<sup>2</sup>: Տակավին գոյատևող ԽՍՀՄ-ի պայմաններում ծավալվեցին ՀՀ իշխանությունների անմիջական առնչությունները արտաքին աշխարհի հետ<sup>3</sup>: Այդ արտաքին քաղաքական ակտերը հանրապետությունում իրավամբ ընկալվեցին որպես դրսում Հայաստանի ինքնիշխանության ճանաչման յուրօրինակ դրսևորումներ<sup>4</sup>:

Անկախության հռչակագրի ընդունումից հետո մինչև անկախության հանրաքվե ընկած ժամանակահատվածում արտաքին աշխարհի հետ ունեցած առնչություններում ինքնիշխանության աստիճանական ծավալման նպատակով, ՀՀ նախաձեռնած գործընթացը բարենպաստ արտաքին քաղաքական մթնոլորտ ապահովեց Հայաստանում անկախության հանրաքվեի հաջող իրականացման և հետագայում էլ համաշխարհային հանրության կողմից անկախ Հայաստանի Հանրապետության արագորեն ճանաչման համար:

### **Երկրորդ ենթավերնագիր - Արտերկրի կողմից նորանկախ Հայաստանի ճանաչման ընթացքը**

Լիակատար անկախության կարևորագույն չափորոշիչներից է համաշխարհային հանրության կողմից ազգային պետության ճանաչումը:

Փաստական առումով Հայաստանի Հանրապետության անկախությունը առաջինը ճանաչել և նրա հետ այդ հենքի վրա դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել ՀՀ անկախության հանրաքվեից ուղիղ երկու ամիս անց՝ 1991 թ. նոյեմբերի 21-ին նույնպես նորանկախ Լիտվայի Հանրապետությունը<sup>5</sup>:

Իսկ, այսպես, կոչված հեռավոր արտերկրից առաջինը ՀՀ-ն ճանաչել և նրա հետ 1991թ. դեկտեմբերի 25-ին դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել Ռումինիան<sup>6</sup>: ՀՀ-ն առաջինը ճանաչած երկրների թվում էին Ռուսաստանի Դաշնությունը<sup>7</sup>, ԱՄՆ<sup>8</sup>-ը, Թուրքիան<sup>9</sup>: Հայաստանի անկախացման տարում ընդամենը 3 ամսվա ընթացքում ՀՀ-ն ճանաչել էին աշխարհի 48 պետություններ, որոնց թվում էին նաև Չինաստանը, Հնդկաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Եգիպտոսը, Մարոկկոն, Մեքսիկան, Իսրայելը, Բրազիլիան, Դանիան, Նիդերլանդները և այլն<sup>10</sup>: Անկախացած Հայաստանի Հան-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 19 (975), 15 հոկտեմբերի 1990թ., էջ 5, № 21 (977), 15 նոյեմբերի 1990թ., էջ 26:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ.113., ց.164, գ. 601, թ. 1-2, գ. 669, թ.1-2, Հայաստանի Հանրապետություն 8 դեկտեմբերի 1990թ., 21 փետրվարի, 3, 10, 11 ապրիլի 1991թ.:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետություն, 18, 22, 31 հունվարի, 23, 24, 25 մայիսի 1991թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 2 (982), 31 հունվարի 1991թ., էջ 20-21:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետություն, 29 հունվարի, 1991թ.:

<sup>5</sup> Նույն տեղում, 22 նոյեմբերի, 1991 թ., ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 68, թ. 6:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 188, թ. 1-7, Հայաստանի Հանրապետություն, 13 դեկտեմբերի, 1991 թ., 15 հունվարի, 1992թ.

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 24(1004), 31 դեկտեմբերի 1991 թ., էջ 55, Հայաստանի Հանրապետություն, 18, 19 դեկտեմբերի, 1991թ., ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 68, թ. 8:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետություն, 27 դեկտեմբերի, 1991 թ., ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 204, թ. 4-5, ՀՀ ԱԳՆ ՊԴԲ, գ. 1, գ. 8, թ. 1-2:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 192, թ. 1-3, Հայաստանի Հանրապետություն, 15 հունվարի, 1992 թ.:

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետություն, 15 հունվարի, 1992 թ., ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 214, թ. 1-4, գ. 196, թ. 1-12, գ. 220, թ. 1-12, գ. 221, թ. 1-8, գ. 229, թ. 1-10, գ. 206, թ. 1-6, գ. 226, թ. 1-8, գ. 199, թ. 1-7, գ. 197, թ. 1-5, գ. 228, թ. 1-5, գ. 193, թ. 1-14:

րապետության ճանաչման շքահանդեսը էլ ավելի մեծ թափով շարունակվեց 1992 թ.<sup>1</sup>: 1992 թ. գարնանն արդեն անկախ Հայկական պետությունը ճանաչել էին աշխարհի 101 երկրներ, որոնցից 42-ի հետ հաստատվել էին դիվանագիտական հարաբերություններ<sup>2</sup>:

Դրանց թվում էին նաև Հայաստանի երկու հարևան պետությունները՝ Իրանն ու Վրաստանը<sup>3</sup>: Նորանկախ Հայաստանի արտաքին գործընթացները համակարգող և իրականացնող գերատեսչության առջև ծառայել էին բազում խնդիրներ, որոնց հետ հանրապետությունը խորհրդային շրջանում երբեք չէր առնչվել<sup>4</sup>:

Հայաստանի ինքնուրույնության կարևորագույն չափանիշներից է օտարերկրյա ներկայացուցչությունների առկայությունը երկրում և ՀՀ դեսպանությունների գոյությունը արտասահմանում<sup>5</sup>:

Օտարերկրյա հեռու ու մոտիկ տերությունների կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչման գործընթացը չթուլացող տեմպերով շարունակվում էր նաև հաջորդ տարիներին: 1997 թ. Հայաստանի Հանրապետությունը արդեն ճանաչել էին աշխարհի 128 երկրներ, որոնցից դիվանագիտական հարաբերություններ հաստատվել էին 114-ի հետ<sup>6</sup>:

Արտասահմանյան պետությունների կողմից նորանկախ Հայաստանի ճանաչումը և հատկապես ՀՀ հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ինքնամպատան գործընթաց չէր: Դա այն ամիրաժեշտ ձեռնարկումն էր, որից հետո միայն հնարավոր էր դառնում, վերջին հաշվով, ազգային անկախ պետականության հաստատման և զարգացման շահերով պայմանավորված Հայաստանի Հանրապետության առավել արդյունավետ փոխգործունեությունը արտերկրի հետ:

Անկախացումից հետո էլ Հայաստանը չչեղվեց հայ և ռուս ժողովուրդների բազում փորձությունների բովով անցած եղբայրական փոխհարաբերություններում ձևավորված մոտեցումների ռազմավարությունից: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման միայն առաջին հիմն գ տարիների ընթացքում կնքվել էին 100-ից ավելի միջպետական և միջգերատեսչական ամենատարբեր բնույթի պայմանագրեր<sup>7</sup>: Պայմանագրերի և կայացված համաձայնությունների թիվը քննարկվող ժամանակահատվածում գնալով ավելանում էր<sup>8</sup>: Երկու երկրների միջև լայն համագործակցություն էր ծավալվել ռազմաքաղաքական, տնտեսական, գիտաուսումնական և այլ ոլորտներում<sup>9</sup>:

ՀՀ անկախությանը հաջորդած առաջին տասնամյակում դինամիկ զարգացում էին

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 233, ք. 1-15, գ. 231, ք. 1-6, գ. 230, ք. 1-4, գ. 235, ք. 1-4, գ. 238, ք. 1-18, գ. 239, ք. 1-10, գ. 241, ք. 1-3, գ. 243, ք. 1-10, գ. 245, ք. 1-18, գ. 247, ք. 1-13, գ. 248, ք. 1-6, գ. 249, ք. 1-4:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 9, գ. 68, ք. 6:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, ք., 14-15, ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց. 1, գ. 8, ք. 8, Հայաստանի Հանրապետություն, 13 փետրվարի 1992թ.:

<sup>4</sup> Նույն տեղում, գ. 1, ք. 1-44:

<sup>5</sup> Նույն տեղում, ֆ. 113, ց. 167, գ. 484, ք. 1, ք. 2, գ. 554, ք. 1, գ. 168, գ. 40, ք. 1, ց. 169, գ. 128, ք. 1, Հայաստանի Հանրապետություն, 11 օգոստոսի, 25 նոյեմբերի 1992 թ.:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետություն, 2 հուլիսի 1997 թ.:

<sup>7</sup> ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց. 5, գ. 283, ք. 6-18, 103-108, 166-181, Հայաստանի Հանրապետություն, 2 ապրիլի 1997թ.:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետություն, 14 սեպտեմբերի 2001թ.:

<sup>9</sup> ՀԱԱ ֆ. 326, ց. 9, գ. 68, ք. 8, ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց. 1, գ. 115, ք. 57-59, ց. 5, գ. 283, ք. 6-18, ք. 28-32, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 12, (1064), 30 հունիսի 1993 թ., էջ 13-14, Հայաստանի Հանրապետության պեշտոնական տեղեկագիր № 10, 8 մայիսի 1997 թ., էջ 11, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թ.թ., երևան, 2002թ., էջ 379-382, 409-417, Հայաստանի Հանրապետություն, 15 հունվարի 1992թ., 18 սեպտեմբերի 2001թ.:

ապրում հայ-ամերիկյան միջպետական հարաբերությունները<sup>1</sup>:

Հայաստանի անկախ պետականության հաստատման և զարգացման առումով, բնականաբար, չափազանց կարևոր էին անմիջական սահմանակից հարևանների հետ ունեցած փոխհարաբերությունները:

Եվրոպայի առաջատար երկրների հետ փոխհարաբերությունները կառուցվում էին հայ ժողովրդի ազգային շահերից բխող տարբեր ակնկալիքների տեսանկյունով: Ֆրանսիայի հետ Հայաստանի կապերն այդ հարթության վրա առավել խոր էին փոխըմբռնման և համագործակցության առումով: Ֆրանսիան թվով 20-րդ պետությունն էր, որ 1992 թվականի փետրվարին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՀՀ-ի հետ<sup>2</sup>:

Ֆրանսիան, ի թիվս նորանկախ ՀՀ-ի բարեկամ այլ երկրների, լրջագույն ներդրում ունեցավ Հայաստանի՝ ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին և Եվրոպայի հտորհրդին ու միջազգային այլ հեղինակավոր կառույցներին անդամակցության հարցում<sup>3</sup>: Ֆրանսիական Հանրապետությունը, որպես Սինսկի խմբի համանախագահող երկիր, խնդրո առարկա ժամանակահատվածում լուրջ ջանքեր էր ներդնում Արցախի խնդրի արդարացի լուծման ուղղությամբ<sup>4</sup>: Չափազանց մեծ էր Ֆրանսիայի դերակատարությունը նաև հայոց ցեղասպանության հարցի միջազգայնացման գործընթացում<sup>5</sup> և այլն:

Գերմանիայի հետ փոխհարաբերությունները առավելապես տնտեսական բնույթի էին<sup>6</sup>: ՀՀ և Գերմանիայի Ղաշնային Հանրապետության միջև կայուն էին նաև քաղաքական հարաբերությունները: Միջպետական հարաբերությունների ոլորտներում ծավալված երկու երկրների բավականին բեղմնավոր համագործակցության պայմաններում, ըստ էության փոխվում էին նաև հայ և գերմանացի ժողովուրդների մոտ առկա կարծրատիպերը միմյանց վերաբերյալ<sup>7</sup>:

Շոշափելի արդյունքներ էին արձանագրվում նաև աշխարհի մյուս երկրների հետ ՀՀ հարաբերություններում: Մեծ Բրիտանիայի հետ հատկապես զարգանում էին տնտեսական և մասնավորապես ֆինանսական բնույթի հարաբերությունները<sup>8</sup>: Հասարակական հարաբերությունների բոլոր հիմնական ոլորտներում հատկապես ակտիվ փոխհարաբերություններ էին հաստատվել Սիրիայի, Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Չինաստանի, Լիբանանի, Կիպրոսի<sup>9</sup> և այլ երկրների հետ:

Ավանդաբար սերտ էին նաև փոխգործունեության դարավոր պատմություն ունեցող հայ-հունական հարաբերությունները<sup>10</sup>:

Կիպրոսի հետ զարգացել էին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական և մշա-

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց.9, գ. 68, թ. 9-10, ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց. 1, գ. 232, թ. 91-127, Հայաստանի Հանրապետություն, 26 հունիսի 1997 թ., 31 մարտի 1999թ., ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց.1, գ. 232, թ. 64, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տեղեկագիր, հ 3-4 (1093-1094), սեպտեմբեր 1995 թ., էջ 7:

<sup>2</sup> ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց.1, գ.8, թ.7, Հայաստանի Հանրապետություն, 25 փետրվարի 1992թ.:

<sup>3</sup> Նույն տեղում, գ.180, թ.53, 167:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 86, 163, 170:

<sup>5</sup> ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց.1, գ.180, թ.53, Հայաստանի Հանրապետություն, 22 հունիսի 1994թ.:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ.113, ց.168, գ.251, թ.1-2, Հայաստանի Հանրապետություն, 22 դեկտեմբերի 1995թ., 2 օգոստոսի 1996թ., 9 հունվարի 2000թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր № 16, 7 հուլիսի 1997թ., էջ 30, № 25 (123), 31 հոկտեմբերի 2000թ., էջ 14:

<sup>7</sup> ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց.1, գ.178, թ. 3,9, Հայաստանի Հանրապետություն, 4 մարտի 1999թ.:

<sup>8</sup> Նույն տեղում, 21 հունիսի 1995թ., 19 մարտի, 5 հոկտեմբերի 1996թ.:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ.326, ց.9, գ. 68, թ. 17:

<sup>10</sup> Նույն տեղում, ֆ.113, ց.167, գ. 210, թ. 1-3, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր ղ7 (139), 5 մարտի 2001թ., էջ 49:

կութային բնույթի կապերը<sup>1</sup>:

Կանադայի հետ տնտեսական համագործակցության դրսևորումներից էին Հայաստանում 1992 թվականին բացված կանադական «Արմենթերթյո» բաժնետիրական ընկերության մշտական ներկայացուցչության հիմնումը<sup>2</sup>, «Գրանդ տոբակո» համատեղ ձեռնարկության ստեղծումը<sup>3</sup> և այլն:

Միջպետական սերտ կապերի առկայության պայմաններում կնքված պայմանագրերի արդյունքում համագործակցություն էր ստեղծվել Հայաստանի ոսկու արդյունաբերության մեջ Հնդկաստանի հետ<sup>4</sup>:

2001 թվականի տվյալներով գործում էին 50-ից ավելի հայ-լիբանանյան համատեղ ձեռնարկություններ<sup>5</sup> և այլն: Ըստ էության համանման իրավիճակ էր 2000 թվականի տվյալներով Հայաստանի հետ ակտիվ տնտեսական կապեր ունեցող բոլոր 50-55 երկրների պարագայում<sup>6</sup>:

### **Երրորդ ենթագլուխ - Միջազգային կառույցներին անդամակցության գործընթացը, որպես ատաքին աշխարհում Հայաստանի լիիրավ ինքնիշխանության հաստատման գլխավոր ուղղություն**

Արտասահմանյան երկրների հետ երկկողմ հարաբերությունների հաստատման գործընթացում առաջնությունը տրվում էր ԱՊՀ երկրներին:

Հենց սկզբից Հայաստանը ամենակտիվ կերպով մասնակցում էր ԱՊՀ երկրների պետությունների ղեկավարների համոդիպումների նախապատրաստական աշխատանքներին և անցկացնում<sup>7</sup>: ԱՊՀ-ն ըստ էության դարձավ անկախացած երկրների զգալի մասի համար կայունության հաստատման ու պահպանման, ինչպես նաև արտաքին հնարավոր մարտահրավերները դիմագրավելու արդյունավետ միջոց<sup>8</sup>:

Տնտեսական կապերի ամրապնդման հետ զուգընթաց ԱՊՀ շրջանակներում ձեռնարկվում էին նաև անդամ երկրների միջև քաղաքական, մշակութային և այլ բնույթի կապերի սերտացմանը միտված միջոցառումներ<sup>9</sup>: Հենց սկզբից Անկախ պետությունների համագործակցության մեջ կարևորվեցին կառույցի անդամ երկրների ռազմաքաղաքական անվտանգության խնդիրները<sup>10</sup>: Քննարկվող ժամանակահատվածում Հայաստանը ակտիվորեն մասնակցում էր ռազմապաշտպանական ոլորտի նոր պայմանագրերի կնքմանն ու համաձայնությունների կայացմանը<sup>11</sup>:

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետություն, 1 փետրվարի 1994թ., 23 հուլիսի 1998թ., 19 մայիսի 1999թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր № 19 (85), 16 հուլիսի 1999թ., էջ 12:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետություն, 22 մայիսի 1992թ.:

<sup>3</sup> 8 th Anniversary of the Independence of the Republic of Armenia: Peace, Stability, Economic Growth. Ontario, The Zoryan Inst. of Canada, 1999, p.12, Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002թ., էջ 264:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետություն, 19 փետրվարի 1999թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր հ. 8 (1036), 30 ապրիլի 1993թ., էջ 50, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր հ. 7-8 (1107-1108). ապրիլ 1996թ., էջ 122-123, ՀԱԱ, ֆ.113, ց.171, գ.100, թ.1:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետություն, 4 մայիսի 2001թ.:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 175, գ. 311, թ. 1-12, Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002թ., էջ 248-249:

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետություն, 1, 21 հունվարի, 24 մարտի, 16 մայիսի, 9 հոկտեմբերի 1992 թ.:

<sup>8</sup> Նույն տեղում, 15 հունվարի 1994 թ.:

<sup>9</sup> Հայաստանի Հանրապետություն, 3 ապրիլի 1992 թ.

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետություն, 10 հունվարի, 21 փետրվարի, 28 մարտի, 1 ապրիլի, 2 ապրիլի 1992 թ.:

<sup>11</sup> Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, № 8(1098), 30 նոյեմբերի 1995 թ., էջ 11, Հայաստանի Հանրապետություն, 25, 26 մայիսի 2001 թ.:

Անկախացման տարում Հայաստանի Հանրապետությունը, իրականացնելով միջազգային հարաբերություններում սուբյեկտայնության իր իրավունքը, անմիջապես ձեռնամուխ եղավ համաշխարհային հանրության մեջ ներգրավվելու ուղղությամբ վճռական քաղաքական քայլերի, որոնք նախ և առաջ դրսևորվեցին միջազգային հեղինակավոր կառույցներին անդամակցելով և համաշխարհային համագործակցության մեջ ներգրավվելու նպատակով միջազգային իրավական դաշտին միանալուն միտված պետական ակտերով:

1992 թ. մարտի 2-ին Նյու Յորքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 46-րդ նստաշրջանում Հայաստանի Հանրապետությունը միաձայն ընդունվեց ՄԱԿ-ի անդամ<sup>1</sup>:

1992 թ. մայիսից Հայաստանը ՄԱԿ-ում ունեցավ իր մշտական ներկայացուցիչը<sup>2</sup>: Ըստ նախապես կնքված համաձայնագրերի՝ 1992 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվական վարչությունն ու Ջարգացման ծրագիրը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի լիազորությամբ երևանում հիմնադրեցին Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակը<sup>3</sup>:

Անգնահատելի էր խնդրո առարկա ժամանակահատվածում, հատկապես հասարակական-քաղաքական ու տնտեսական ոլորտներում արմատական հեղաբեկում իրականացնող Հայաստանում, Միավորված ազգերի կազմակերպության խաղացած բացառիկ դերը: Միավորված ազգերի կազմակերպության հիմնական ֆինանսական օղակների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը սկսվել էր տակավին այդ կառույցների մեջ ներգրավվելու նախնական շրջանից<sup>4</sup>:

1990-ականների կեսերին Հայաստանին արտերկրից տրամադրված բոլոր վարկերի 60 տոկոսը կազմում էին ՀԲ-ի արտոնյալ վարկերը<sup>5</sup>:

ՄԱԿ-ին ՀՀ անդամակցումից հետո Միավորված ազգերի կազմակերպությունը ակտիվորեն արձագանքում էր նորանկախ Հայաստանի համար ամենակարևոր հիմնախնդրին՝ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիայի արդյունքում ծագած, հայ-ադրբեջանական առճակատմանը, Արցախում ծավալված իրադարձություններին<sup>6</sup>:

Հայաստանը անկախացման սկզբից ևեթ իր արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից էր համարում ՀՀ ինտեգրումը եվրակառույցներին: Անկախ Հայաստանի ինքնիշխանության հաստատման կարևորագույն ձեռքբերումներից էր 1992 թ. հունվարին ՀՀ անդամակցումը Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցությանը<sup>7</sup>:

Դեռևս ԵԱՀԽ ձևաչափով էլ ստեղծվեց Արցախյան հիմնախնդրի լուծման հիմնական կառույցը՝ Մինսկի հանձնաժողովը<sup>8</sup>:

Հայաստան-Եվրոպա համագործակցությունը փաստորեն ընթանում էր 4 հիմնական ուղղություններով, Եվրոպական խորհրդի հետ՝ ՀՀ-ում ազատական օրենսդրական դաշտի

<sup>1</sup> ՀՀ ԱԳՆ ՊՊԲ, ց. 1, գ. 8, ք. 21, Ազգ, 4 մարտի 1992թ.:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետություն, 7 մայիսի 1992 թ.:

<sup>3</sup> Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Եր., 2003, էջ 10, 132, Հայաստանի Հանրապետություն, 12 հունիսի 1992 թ.:

<sup>4</sup> Ազգ, 22 ապրիլի 1992 թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Հ. 8 (1012), 30 ապրիլի 1992 թ., էջ 11-15, Հայաստանի Հանրապետություն, 2 հունիսի, 1, 18 սեպտեմբերի 1992թ.:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետություն, 9 դեկտեմբերի 1995 թ.:

<sup>6</sup> Նույն տեղում, 29 հունվարի, 5, 10 մարտի 1992 թ.:

<sup>7</sup> Նույն տեղում, 1 փետրվարի 1992 թ.:

<sup>8</sup> Նույն տեղում, 26 մարտի 1992 թ., ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 47, ք. 20-23, ՀՀ ԱԳՆ ՊՊԲ, ց. 1, գ. 17, ք. 2-34:

ծնավորման բնագավառում, տնտեսական վերափոխումների ոլորտում հին աշխարհամասի հետ համագործակցությունը իրականացվում էր Եվրամիության միջոցով, քաղաքականության բնագավառում՝ ԵԱՀԿ-ում Հայաստանի մասնակցությամբ, անվտանգության ասպարեզում՝ ՆԱՏՕ-ի շրջանակներում «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի միջոցով:

Հայաստանը անկախացումից անմիջապես հետո ամենաակտիվ գործունեություն էր ծավալել Եվրոպայի խորհրդին անդամակցելու ուղղությամբ<sup>1</sup>:

Կառույցին Հայաստանի պաշտոնական ինտեգրումը ապահովելու նպատակով մինչև 2000 թ. Եվրախորհրդի և ԵԽ խորհրդարանական վեհաժողովի զեկուցողները, Հայաստան կատարած աշխատանքային գործուղումների արդյունքում, պատրաստել էին 15 պաշտոնական զեկույց<sup>2</sup>:

Անկախության և պետական ինքնիշխանության ամրապնդման ուղով ընթացող Հայաստանի Հանրապետության պատմության մեջ լուրջ ձեռքբերում էր 2001 թ. հունվարի 25-ին ՀՀ պաշտոնական լիիրավ անդամակցումը Եվրոպայի խորհրդին<sup>3</sup>:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, խնդրո առարկա ժամանակահատվածում, ակտիվորեն համագործակցում էր նաև համաշխարհային ու տարածաշրջանային տնտեսական, քաղաքական բնույթի այլ կառույցների հետ:

### **ՉԼՈՒԽ ԳԻՆԳԵՐՈՐԴ**

## **ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՋՈՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՑԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ**

### **ՊԼՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՎԱՍՏՈՒՄ**

**Առաջին ենթագլուխ - Արցախահայության ազատագրական պայքարին վճռորոշ աջակցությունը՝ որպես նորանկախ Հայաստանի պետական ինքնիշխանության կարևորագույն դրսևորում**

Ղարաբաղյան շարժումը հայ ժողովրդի նորօրյա պատմության մեջ ազգային ինքնիշխանության հաստատման համար ամենածավալուն պայքարի բացառիկ դրսևորում է: Լեռնային Ղարաբաղի համար պայքարը, հայ ժողովրդի արմատական շահերից բխող Արցախյան հիմնախնդրի բարձրաձայնումը հայոց ազգային անկախության նվաճման ուղու սկիզբն էր:

Հանուն իր անկախության պահպանման և ամրապնդման արցախահայերի պայքարում վճռորոշ էր արդեն նորանկախ Հայաստանի՝ որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտի դերակատարությունը: Տեղի էին ունենում ԵԱՀԽ պատվիրակությունների գործնական հանդիպումները Հայաստանի իշխանությունների հետ<sup>4</sup>: Բացի այդ, հայկական կողմը, օգտագործելով իր մասնակցությունը միջազգային աստիճանների գործունեությանը, բազմիցս նրանց առջև բարձրացնում էր արցախյան հարցի արդարացի լուծմանն աջակցելու խնդիրը<sup>5</sup>: Հանդիսանալով կայանալիք Մինսկի կոնֆերանսի մասնակից պետություն՝ Հայաստանը, փաստորեն օգտագործում էր իր ինքնիշխան երկրի մանդատը կոնֆերանսի նախապատրաստական շրջանում հայ ժողովրդի արմատական շահերը ներկայացնելու և պաշտպանելու գործում<sup>6</sup>: Նորանկախ Հայաստանը իր ազատության համար մարտնչող Արցախին բնականաբար աջակցում էր ամեն ինչով: ՀՀ կառավարության 1992 թ. որոշմամբ ԼՂՀ-ին բոլոր կարգի օգնությունների իրականացումը կանոնավորելու նպա-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետություն, 27 հունվարի 1996 թ., ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց. 1, գ. 192, թ. 63:

<sup>2</sup> Ազգ, 23 մարտի 1992թ., Հայաստանի Հանրապետություն, 15 մարտի 2000 թ.:

<sup>3</sup> ՀՀ ԱԳՆ ՊՂԲ, ց. 1, գ. 17, թ. 118-122, Հայաստանի Հանրապետություն, 26 հունվարի 2001 թ.:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետություն, 19 փետրվարի, 24 մարտի, 28 ապրիլի, 1, 6, 12, 14, 23, 26 մայիսի 1992 թ.:

<sup>5</sup> Նույն տեղում, 20, 24 մարտի, 13 մայիսի 1992 թ.:

<sup>6</sup> Նույն տեղում, 6 մարտի, 14 հուլիսի, 4 օգոստոսի 1992 թ.:



տակով այդ գործի կազմակերպումն ու իրականացումը հանձնարարվել էր ՀՀ հատուկ ծրագրերի պետական վարչությանը<sup>1</sup>:

1993 թ. մարտին Հայաստանի վարկային էմիսիայի ընդհանուր ծավալից ԼՂՀ պետական բյուջեին լրացուցիչ ֆինանսավորման նպատակով հատկացվել էր 98 մլն ռուբլի<sup>2</sup> և այլն:

1992 թ. ընթացքում Արցախի ինքնապաշտպանության շարքերում մարտնչած հազարավոր զինվորների զգալի մասը Հայաստանում ձևավորված երկրապահ կամավորական ջոկատների ազատամարտիկներ էին<sup>3</sup>, իսկ 1993 թ. գարնանից Լեռնային Ղարաբաղում մարտնչում էր արդեն ձևավորված միասնական հայոց բանակը, որի բաղկացուցիչ մասերն էին Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի զինված ուժերը<sup>4</sup>:

Սակայն, այնուամենայնիվ, արցախյան խնդրի լուծման ռազմավարական և հատկապես մարտավարական հարցերում Հայաստանում ու մասնավորապես նրա իշխանական օղակներում առկա էին լուրջ տարակարծություններ: Ժողովրդական ամենալայն զանգվածների ճնշման տակ ՀՀ-ական իշխանությունները ստիպված էին իրենց գործողություններում հաշվի առնել ազգային կենսական շահերը:

Արցախի Հանրապետությանը սատարող Հայաստանի Հանրապետության համար մի նոր փորձություն էր 1993 թ. դեկտեմբերի 18-ից ԼՂՀ-ի վրա Ադրբեյջանի կողմից իրականացված լայնածավալ հարձակումը<sup>5</sup>: Հայկական ուժերի վճռական դիմադրությունը հարկադրեց մեծ կորուստներ տված Ադրբեյջանական կողմին 1994 թ. մայիսին ստորագրել կրակի դադարեցման մասին համաձայնագիրը<sup>6</sup>: Զինադադարից հետո Հայաստանի իշխանությունների գլխավոր մտահոգությունը հաշտության պայմանագրի, Արցախի կարգավիճակի հարցերն էին:

1996 թ. դեկտեմբերին ԵԱԿ Լիսաբոնյան գագաթնաժողովում Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերություններում լիիրավ սուբյեկտայնությունը հնարավոր դարձրեց արցախյան հարցի արդարացի լուծմանը սպառնացող վճռի երևան գալուն<sup>7</sup>:

Ղարաբաղյան հարցի արդարացի լուծման մեջ կենսականորեն շահագրգռված ուժերի իշխանության գալով էական փոփոխություններ արձանագրվեցին Արցախին սատարելու ուղղությամբ Հայաստանի վարած քաղաքականության մեջ: Ավելի սերտացան կապերը ՀՀ և ԼՂՀ իշխանական կառույցների, հայկական երկու հանրապետությունների միջև<sup>8</sup>:

**Երկրորդ ենթագլուխ - Անկախ պետականությունը ազգային ինքնության հիմնարար արժեքների արմատավորման գործընթացում:**

Անկախացումն էլ ավելի մեծացրեց հայ ժողորդի ազգային ինքնավստահությունը՝ հայության գոյատևման մաքառումին հաղորդելով նոր որակ: Իր պետականությամբ ինքնիշխան հայ ազգն իրավունք նվաճեց առանց պայմանականությունների, անարգել, կրկին մերժենալու իր պատմական սկունքներին: Անկախացումից հետո ողջ հայ ժողովուրդը բացառիկ հնարավորություն ստացավ պետականորեն, արժարժելու իր ինքնության հետ առնչվող բազմաբնույթ հիմնախնդիրները՝ այդ հարթությունում պաշտպանելով հայ ազգի կենսական շահերը: Այդ առումով, բնականաբար, նորանկախ հայկական պետականության

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ.113, ց.168, գ. 76, թ. 1-2:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 169, գ. 77, թ. 1-2:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետություն, 30 հունիսի 1992 թ.:

<sup>4</sup> Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000. գիրք 9, 1985-2000, Ստեփանակերտ, 2007, էջ 456-457:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետություն, 20 հունվարի, 1994 թ.:

<sup>6</sup> Նույն տեղում, 10, 11, 13 մայիսի 1994 թ., 13 մայիսի 1999 թ.:

<sup>7</sup> Նույն տեղում, 4 դեկտեմբերի 1996 թ.:

<sup>8</sup> Նույն տեղում, 28 ապրիլի, 25 դեկտեմբերի 1998 թ., 22 ապրիլի, 12 հոկտեմբերի 1999 թ., 27 հունվարի, 7 մարտի 2000 թ.:

առջև ծառայած կարևորագույն խնդիրներից էր հայ ժողովրդի ենթագիտակցության մեջ արմատավորված, նրա ազգային ինքնության անկապտելի մասը դարձած<sup>1</sup> հայոց ցեղասպանության հիմնահարցը, որը Հայաստանի անկախացմանը անմիջականորեն հաջորդած շրջանում քաղաքական որոշ չարդարացված հաշվարկների արդյունքում, ըստ էության, անուշադրության էր մատնվել իշխանությունների կողմից<sup>2</sup>: 1998 թ. իշխանափոխությունից հետո ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում իրեն արժանի տեղը զբաղեցրեց հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը<sup>3</sup>: Մեծ եղեռնի ճանաչման հարցը երկրի արտաքին քաղաքականության օրակարգային խնդիր դառնալու գործում վճռորոշ էր Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանում 1998 թ. սեպտեմբերի 25-ին ունեցած ելույթը<sup>4</sup>:

Համաշխարհային հանրության կողմից հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը քննարկվող ժամանակահատվածում աննախադեպ առաջընթաց ապրեց: Մարդկության դեմ իրականացված ոճրագործությունը դատապարտվեց Ավստրալիայի<sup>5</sup>, Իտալիայի<sup>6</sup>, ԱՄՆ-ի<sup>7</sup> և այլ երկրների խորհրդարանների կողմից<sup>8</sup>: 2001 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծ, որով փաստորեն Ֆրանսիան աշխարհում առաջինը օրենքի տեսքով ճանաչեց 20-րդ դարի սկզբին Օսմանյան թուրքիայում իրականացված հայերի ցեղասպանությունը<sup>9</sup> և այլն: Տակավին անկախացման ուղին դեռևս նոր որդեգրած Հայաստանի համար հայ ժողովրդի պատմականորեն ձևավորված, ազգային ինքնության վերահաստատման թերևս ամենակարևոր խնդիրներից էր հայոց լեզվի հարցը:

Հանրապետությունում ինչպես լեզվական քաղաքականության, լեզվավիճակի և լեզվահարաբերությունների, այնպես էլ խորքային առումով անկախ, ինքնիշխան պետականության ամրապնդման գործում չափազանց կարևոր էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1993 թ. ապրիլի 17-ին ընդունված «Լեզվի մասին» օրենքը<sup>10</sup>: Օրենքի գործունեության արդյունքում, քննարկվող ժամանակահատվածում, հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, գրական հայերենը հաստատվեց, որպես միակ պաշտոնական լեզուն: Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման ու դաստիարակության միակ պետական լեզուն դարձավ հայերենը և այլն:

Ինքնիշխան պետականություն վայելող հայ ժողովուրդը սահմանեց ազգի մեծ գա-

---

<sup>1</sup> Գարագաշեան Մ., Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը. Հոգեբանական վերլուծություն, Եր., 2006, էջ 33:

<sup>2</sup> Ազգ, 1 ապրիլի 1992թ., Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը, Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Եր., 1999, էջ 142, Հայաստանի Հանրապետություն, 29 օգոստոսի 1991 թ.:

<sup>3</sup> Անանյան Ա., Հայոց ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004 թթ.). Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2005, էջ 4:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետություն, 26 սեպտեմբերի 1998 թ.:

<sup>5</sup> Ավստրալիայի խորհրդարանական քննարկումները Հայոց ցեղասպանության մասին, խմբ. Լ. Բարսեղյան, Եր., 2001, էջ 3-6:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետություն, 21 նոյեմբերի 2000 թ.:

<sup>7</sup> Նույն տեղում, 23, 30 սեպտեմբերի, 5 հոկտեմբերի 2000 թ.:

<sup>8</sup> Բարսեղյան Լ. Ա., Տարեգրություն հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003), Եր., 2004, էջ 12-13:

<sup>9</sup> Բարսեղյան Լ.Ա., Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Եր., 2002, էջ 86:

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 8 (1036), 30 ապրիլի 1993 թ., էջ 4-6:

վակների իսկական պաշտամունք: Քննարկվող ժամանակահատվածում հայ հասարակության մեջ ազգի ինքնության վերահաստատման առումով առանձնակի նշանակություն էր ձեռք բերել օտար ափերում թաղված արժանավոր, ժողովրդի համար անձնագրային նշանակության հայրերինների՝ հայրենիքում վերահուղարկավորման ինքնաբուխ, համաժողովրդական նախաձեռնությունը: Առաջիններից մեկը հայ ազգի պանծալի զավակ Անդրանիկի աճյունը 2000 թ. վերահուղարկավորվեց հայրենիքում<sup>1</sup>:

Պատմական գրեթե բոլոր ժամանակահատվածներում ազգային միասնության զաղափարը միշտ էլ եղել է հայ հասարակության գերակա արժեքներից: Եվ ուրեմն ամենևին էլ պատահական չէր, որ հայաստանյան իշխանությունները ամենաակտիվ կերպով ներգրավվեցին հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի էլ ավելի ամրապնդման գործում<sup>2</sup>:

Հայ ժողովրդի ազգային ինքնության թերևս ամենակայուն բնագավառներից մեկուն կրոնական ոլորտում վիճակը կտրուկ փոխվեց Հայաստանի անկախացումից հետո:

Առաքելական եկեղեցին միշտ էլ եղել է իր ժողովրդի ու պետության կողքին և նոր ժամանակներում, երբ հայ ժողովուրդը պետականորեն վերադարձել է միջազգային ասպարեզ իրավամբ գրավելու իր արժանի տեղը 1700-ամյա Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին, ինչպես միշտ, այս անգամ էլ հարազատ պետության կողքին է և սատարում է նրան այդ բարդ առաքելությունում ևս<sup>3</sup>:

Այդ առումով խորապես խորհրդանշական էր, որ հայոց հոգևոր դարձի 1700-ամյակը և հայկական հողի վրա անկախության վերականգնման 10-րդ տարեդարձը նշվեցին միասնաբար, որպես միմյանց հետ սերտորեն կապված ժողովրդի կյանքում պատմական բացառիկ նշանակության իրադարձությունների միասնական հորելյան:

**Եզրակացությունների** մեջ ի մի են բերված աշխատության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները.

Հազարամյակների իր պատմության ընթացքում պետականության կայացած ավանդույթներ ունեցող հայ ժողովուրդը 20-րդ դարավերջին արցախյան ազատագրական պայքարի բովում նվաճեց իր անկախությունը վերականգնելու պատմական իրավունքը:

1. Հանուն ինքնիշխան պետականության վերականգնման հայ ժողովրդի ընթացքի համար վճռորոշ ուղղորդող դերակատարություն ունեցավ 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի ընդունած «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որում Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացը սահմանված էր, որպես հասարակության կյանքի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական բնագավառներում իրականացվելիք արմատական ձեռնարկումների ամբողջություն:

Դժվարին էր անկախության հռչակագրի ընդունումից մինչև համաժողովրդական հանրաքվեի միջոցով քաղաքական ինքնիշխանության նվաճումը, Հայաստանի անցած ուղին: Այդ ողջ ժամանակահատվածում Միութենական կենտրոնը կանգ չէր առնում ոչնչի առջև խորհրդային պետության փլուզումը կանխելու համար: Բացահայտ բռնաճնշումներ էին կիրառվում անկախության ուղին բռնած հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի նկատմամբ: Նման պայմաններում հանրապետությունը որդեգրել էր, իրավիճակով պայմանավորված, զգուշավոր քաղաքականություն: Սակայն առավել վճռորոշ

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետություն, 8, 17, 19, 22 փետրվարի 2000 թ.:

<sup>2</sup> Նույն տեղում, 22 հուլիսի, 11, 28, 31 օգոստոսի, 7, 23, 24, 25, 28 սեպտեմբերի 1999 թ., 28 օգոստոսի 2006 թ.:

<sup>3</sup> Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի և Հայաստանի Հանրապետության անկախության 10-ամյակի հանդիսությունը (21 սեպտեմբերի 2001թ.), «Էջմիածին» Թ սեպտեմբեր, Էջմիածին, 2001թ., էջ 24:

պարագաներում, հատկապես անկախության առումով սկզբունքային նշանակության հարցերում Հայաստանը չէր խուսափում կենտրոնի հետ նույնիսկ բացահայտ առճակատումից:

Վերջապես ՀՀ անկախացման ողջ գործընթացի գագաթնակետը դարձավ 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրապետությունում անցկացված անկախության համաժողովրդական հանրաքվեն, որից հետո Հայաստանը գործնականում ձեռնամուխ եղավ ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավաքաղաքական գործընթացին:

Խնդրո առարկա ժամանակահատվածին վերաբերող փաստերի ուսումնասիրությունը բերում է, թվում է, այն ճշմարտացի եզրահանգմանը, որ ինչպես Հայաստանի, այնպես էլ խորհրդային Միության մյուս հանրապետությունների անկախացումը գրեթե անհնարին կդառնար, համենայն դեպս արդեն հայտնի ժամանակահատվածում, եթե ԽՍՀՄ-ի որպես աշխարհաքաղաքական իրողության լուծարումը չլիներ միանգամյա ակտ, այնպես, ինչպես որ այն տեղի ունեցավ. 1991թ. դեկտեմբերի 8-ին, հեռավոր 1922 թվականին ԽՍՀՄ-ը հիմնադրած, սլավոնական 3 հանրապետությունների ստորագրած փաստաթղթով:

2. Ըստ էության անկախության հռչկագրի ընդունմամբ Հայաստանում արդեն սկսվել էր այսպես կոչված «անցումային շրջան», որը ենթադրում էր այն ժամանակահատվածը, որի ընթացքում հանրապետությունում պետք է իրականացվեին տնտեսական, քաղաքական, կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումներ, որոնք միտված էին շուկայական տնտեսությամբ ժողովրդավարական հասարակարգի ձևավորմանը, Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացի կենսագործմանը:

3. Անկախ պետականության հաստատման ուղով ընթացող Հայաստանը ստիպված էր իր առաջին քայլերը կատարել՝ գտնվելով տնտեսական ծայրահեղ ծանր կացության մեջ: Ստեղծված անմխիթար իրավիճակն ուներ իր ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառները: Հայաստանի տնտեսության ամնախաղեպ անկման օբյեկտիվ նախադրյալները կապված էին հիմնականում ԽՍՀՄ-ի փլուզման հետ:

Նորանկախ Հայաստանի տնտեսական վիճակի վատթարացմանը մեծապես նպաստում էին աղետի գոտու առկայությունը, արցախյան պատերազմն ու հանրապետության շրջափակված վիճակը: Սակայն հանրապետության տնտեսական կացության վատթարացման գործում էական դերակատարություն ունեին նաև թույլ տրված սխալներն ու բացթողումները: Անդրադառնալով երբեմնի ինդուստրիալ Հայաստանի տնտեսության փոշիացման ձեռակերտ նախադրյալներին՝ անպայման անհրաժեշտ է արձանագրել, որ դրանցում չափազանց մեծ էր քաղաքական շահարկումների դերը: Այդ հանգամանքը առավել ակնառու է դրսևորվել հատկապես հանրապետության տնտեսական կյանքում առավել վճռորոշ նշանակության տնտեսական հզորությունների՝ «Նաիրիտ» ԳԱՄ-ի, Մեծամորի ՀՎԷԿ-ի, ինչպես նաև քիմիական, լեռնահանքային արդյունաբերության և այլ բնագավառների ամբողջ խումբ ուրիշ ձեռնարկությունների աշխատանքները կանգնեցնելու պարագայում: Գլխավորապես հենց այդ հանգամանքն էր, որ անչափ բարձրացրեց Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման, հանրապետություն մուտք գործող էներգատարների նկատմամբ ահաբեկչական ակտերի իրականացման արդյունավետությունը:

4. Հայաստանի քաղաքական անկախացման գործընթացի հենց սկզբնական ժամանակահատվածից հանրության մոտ որոշակիացել էր այն համոզումը, որ ազգային լիակատար ինքնիշխան պետականության կայացումը, քաղաքացիական հասարակության ձևավորումը հնարավոր էր միայն շուկայական հարաբերությունների հաստատմամբ: Հայաստանում պետական սեփականության մասնավորեցումն անհրաժեշտ էր նաև տնտեսական առումով շուկայական արժեքները դավանող համաշխարհային հանրության մեջ ներգրավվելու համար:

Հարկ է անպայման նշել, որ սեփականաշնորհման սկզբնական շրջանում գործընթացում շատ էին թերացումները, որոնք արդյունք էին այդ ոլորտի կարգավորմանը նպատակամղված իրավական դաշտի անկատարության, վերջինս էլ հետևանք էր ցանկացած գնով շուտափույթ կարգով անկախ պետականության հաստատման, իշխանությունների որդեգրած գործելաոճի: Հապճեպորեն, առանց լուրջ նախապատրաստության սկսված մասնավորեց-

ման գործընթացը ծավալվում էր լուրջ սխալներով ու բացթողումներով:

Սեփականաշնորհման գործընթացի քաղաքական երանգավորումը թերևս ակնառու կերպով դրսևորվեց երկրի տնտեսության մյուս կարևորագույն ճյուղի գյուղատնտեսության մասնավորեցման ընթացքում: Պետական սեփականության մասնավորեցումը վերացնելով ժամանակին Հայաստանին խորհրդայնացման հետևանքով պարտադրված համայնավարական տնտեսակարգը հանդիսացավ անկախ պետականության հաստատման գործընթացի անհրաժեշտ բաղադրատարրը:

5. Քննարկվող ժամանակահատվածում որոշակի քայլեր կատարվեցին նորանկախ Հայաստանի սոցիալական համակարգի ձևավորման ուղղությամբ: Մասնավորապես տեղի ունեցավ գների ազատականացում: Թեև ճիշտ է, որ այդ քայլը նպատակամղված էր քաղաքական անկախություն վայելող Հայաստանի տնտեսական ինքնիշխանության կայացմանն ու հետագա ամրապնդմանը, սակայն գների ազատականացման աննախադեպ արգացված տենպերը, որոնց զգալիորեն զիջում էր տնտեսության մասնավորեցման գործընթացը, հանգեցրին ՀՀ-ում սոցիալական լարվածության: Ինքնիշխանության ծավալման ուղով ընթացող նորանկախ Հայաստանի Հանրապետության կարևորագույն ձեռքբերումներից էր ազգային դրամի ներդնումը: Պատմական նշանակության այդ երևույթը, սակայն իր բացասական ազդեցությունը ունեցավ սեփականաշնորհման գործընթացում այնքան անհրաժեշտ հանրապետության քաղաքացիների մեկնարկային հավասար հնարավորությունների ապահովման վրա: Հանրապետության սոցիալական բնագավառին անմիջականորեն վերաբերող ֆինանսավարկային համակարգի մի մեծ խումբ կարևորագույն ոլորտներում ձեռնարկված քայլերը նպաստեցին նորանկախ Հայաստանի ինքնիշխանության ծավալմանը:

6. Անկախացման անմիջապես հաջորդած տարիներին Հայաստանի իշխանություններին, ըստ էության, հաջողվել էր հանրապետությունում հասարակական-քաղաքական վերափոխումների իրականացման նպատակով, համապատասխան օրենսդրական ակտերի ընդունմամբ ձևավորել որոշակի իրավական դաշտ: Ժողովրդավարական բնույթի օրենքներ էին ընդունվել հասարակական-քաղաքական կազմակերպությունների, լրատվամիջոցների, խոսքի ու խղճի ազատության մասին և այլն, որոնք առաջին տարիներին բավականին հաջողությամբ էին գործում՝ հետևողականորեն ազատականացնելով Հայաստանի հասարակական կյանքը: Միաժամանակ, 1990-ականների կեսերից նորանկախ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների կողմից սկսվեցին հանրապետությունում ժողովրդավարության մի շարք հիմնարար սկզբունքների սահմանափակումները: Իրավիճակը որոշակիորեն փոխվեց 1998 թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո:

7. Հայաստանում անկախ պետականության հաստատման նպատակով իրականացված աննախադեպ ծավալի ձեռնարկումների ընթացքը նախադրյալներ ստեղծեց նորանկախ Հայաստանի պետականաշինության համար: Կայացավ երկրի օրենսդիր մարմինը: Աստիճանական քայլերով հանրապետությունում ձևավորվեց երկրի գործադիր իշխանությունը: Գործադիրի գերագույն գործառույթը, ՀՀ առաջին գումարման խորհրդարանի կողմից վերապահվեց հանրապետության նախագահին, որը համաժողովրդական ուղղակի քվեարկությամբ ընտրվել էր 1991 թ. հոկտեմբերին: Ձևավորվեց նաև գործադիր իշխանությունը իրականացնող կառավարությունը, որի կառուցվածքը խնդրո առարկա գրեթե ողջ ժամանակահատվածում կապված գործնական խնդիրների հետ պարբերաբար ենթարկվում էր փոփոխությունների: Հասկանալի է, որ ինքնիշխան պետության կայացման գործում իր ներդրումն ուներ կառավարման համակարգի յուրաքանչյուր օղակը: Սակայն Ադրբեջանի կողմից պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի Հանրապետության համար պետականության կայացման հենց նախնական փուլում առավել կարևոր էր ուժային կառույցների ու նախ և առաջ զինված ուժերի կայացումը: Որպես անկախ պետականության կարևորագույն կառույցներ այդ շրջանում կայացան նաև ՀՀ Ոստիկանությունն ու Ազգային անվտանգության ծառայությունը և այլն: Նորաստեղծ երկրի կայացման համար չափազանց կարևոր էր նաև պետականության օրենսդրական դաշտի ձևավորումը: 1995 թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց նորանկախ Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի ողնաշարը հան-

դիսացող ՀՀ Սահմանադրությունը: Սահմանադրության հիման վրա հանրապետությունում ձևավորված ժողովրդավարության հիմք հանդիսացող տեղական ինքնակառավարման համակարգի կայացման գործում բացառիկ դերակատարություն ունեցավ 1995 թ. իրականացված ՀՀ վարչատարածքային բաժանումը: Սահմանադրության դրույթներին համապատասխան աստիճանաբար կայացավ նաև նորանկախ Հայաստանի դատական համակարգի ձևավորումը և այլն: Խնդրոք առարկա ժամանակահատվածում հանրապետությունում սկսեց ձևավորվել նաև իշխանական համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից ևս մեկը՝ քաղաքացիական ծառայության համակարգը: Պետաիրավական ոլորտում, Հայաստանում անկախ պետականության հաստատմանը միտված կարևոր ձեռնարկումներից էին երկրի տոնացանկի, պետական բարձրագույն պարգևների սահմանումը, անկախ Հայաստանի քաղաքացիությունը հավաստող գլխավոր փաստաթղթի, հայկական անձնագրի ներդրումը և այլն:

8. Անկախ պետականության հաստատման և զարգացման գործընթացում կարևոր ուղեցիչ էր ինքնիշխան Հայաստանի պաշտոնական ճանաչումը աշխարհի պետությունների գերակշռող մասի կողմից: Արտաքին աշխարհի հետ ուղղակի կապերի ձևավորմանը միտված նախնական քայլերը վերարտադրում, էլ ավելի էին ամրապնդում Հայաստանում օբյեկտիվ զարգացումների արդյունքում արդեն իսկ դրսևորվող ինքնիշխանության հատկանիշները: Անկախության հռչակման նախօրյակին Հայաստանի արտաքին աշխարհի հետ ունեցած պաշտոնական առնչություններից յուրաքանչյուրը նվաճված մի նոր բնագիծ էր արտաքին հարաբերություններում անկախ պետականության հաստատման գործում:

Անկախության հռչակագրի ընդունումից հետո մինչև անկախության հանրաքվեի ընկած ժամանակահատվածում արտաքին աշխարհի հետ ունեցած առնչությունների, ինքնիշխանության աստիճանական ծավալման նպատակով, նախաձեռնված գործընթացը բարենպաստ արտաքին քաղաքական մթնոլորտ ապահովեց Հայաստանում անկախության հանրաքվեի անխաթար իրականացման և հետագայում էլ համաշխարհային համար: Երկրներից մի զգալի մասի հետ Հայաստանը հաստատեց դիվանագիտական կապեր: Հայաստանում հաստատվեցին բազմաթիվ երկրների, այդ թվում աշխարհում հիմնական դերակատարություն ունեցող բոլոր պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունները: ՀՀ-ն դեսպանների ու հյուպատոսների մակարդակով ներկայացվեց հեռու և մոտիկ շատ պետություններում:

Անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետության իշխանությունների առջև, բնականաբար, ծառայում էր բազմաբնույթ խնդիրներ: Բարդ խնդիր էր ազգային արմատական շահերից բխող արտաքին քաղաքականություն մշակելու և վարելու անհրաժեշտությամբ պայմանավորված գործընթացների իրականացումը: Հայաստանը, աստիճանաբար որոշակիացնելով իր արտաքին քաղաքական ձեռագիրը, կարողացավ ծավալել բավականին հավասարակշռված գործունեություն միջազգային թատերաբեմում: Հայաստանի ներգրավումը միջազգային կառույցներում, որը և նորանկախ Հայաստանի՝ որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտի ինքնիշխանության դրսևորումներից էր և միաժամանակ էլ ավելի էր ամրապնդում Հայաստանի Հանրապետության անկախությունը:

9. Անկախ պետականության հաստատման ու զարգացման ուղով ընթացող Հայաստանի Հանրապետության գոյությունը արցախահայության ազատագրական պայքարին սատարող վճռորոշ գործոն էր: Նորանկախ ՀՀ-ն ինքը դեռևս գտնվելով տնտեսական չափազանց ծանր վիճակում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում իրականացվող արմատական վերափոխումների շրջանում, ինչպես միջազգային թատերաբեմում, այնպես էլ տնտեսական, ռազմական և այլ բնագավառներում չափազանց մեծ աջակցություն էր ցուցաբերում Արցախին: Փաստորեն Լեռնային Ղարաբաղին սատարելու հենց Հայաստանի նորանկախ Հանրապետության ինքնիշխանության կարևորագույն դրսևորումներից էր:

10. Նվաճելով իր անկախությունը՝ հայ ժողովուրդը պատմական հնարավորություն ստացավ պետականորեն արժարժելու իր ինքնությանը վերաբերող բազմաբնույթ հիմ-

ճանապարհորդները՝ անկախ պետականության ողջ գործընթացը սատարելով դրանց: Այդ առումով նորանկախ հայկական պետականության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից էր հայ ժողովրդի ազգային ինքնության մի մասը կազմող հայոց ցեղասպանության հիմնահարցը: 1998 թ. իշխանափոխությունից հետո ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում իր արժանի տեղը զբաղեցրեց հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը: Զննարկվող ժամանակահատվածում հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում գրական հայերենը հաստատվեց որպես միակ պաշտոնական լեզու: Ինքնիշխան Հայաստանը պետականորեն սահմանեց իր ազգի նվիրյալ զավակների իսկական պաշտամունքը: Հավատարիմ ազգի համախմբման՝ հայ ժողովրդի համար կենսական դարձած սկզբունքին՝ հայաստանյան իշխանությունները որոշակի ձեռնարկումներ էին իրականացնում ամենատարբեր բնագավառներում սփյուռքահայության կապերը հայրենիքի հետ ամրապնդելու ուղղությամբ:

11. Ամփոփելով Հայաստանում անկախ պետականության հաստատմանն ու զարգացմանը նպատակաուղղված գործընթացի տասնամյա պատմության լուսաբանումը՝ հարկ ենք համարում առանձնակի շեշտել, որ ազգային անկախություն ունենալու ձգտումը բոլոր ժամանակներում էլ եղել է հայ ժողովրդի բաղձալի նպատակը, նրա ինքնությունը կազմող արժեհամակարգի անբաժանելի մասը: Ուստի՝ և բացառիկ նշանակություն են ձեռք բերում անկախ պետականության հաստատմանը և նրա ամրապնդմանը նպատակաուղղված բազմաբնույթ ձեռնարկումների արդյունքները, անկախության կայացման ողջ ընթացքի բոլոր մեծ ու փոքր ժամանակահատվածներում, գործընթացի ամենատարբեր փուլերում: Այդ իրողությունը որոշակիորեն հաստատվեց նաև անկախ պետականության հռչակման տասնամյակի առումով:

Այդ տասնամյակում փաստորեն Հայաստանում կայացավ պետական իշխանության ձևավորումը: Թեկուզ և սխալներով ու բացթողումներով, սակայն այնուամենայնիվ զգալի աշխատանք իրականացվեց ստեղծված պետական կառույցները ազատական հասարակության հիմնական չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Պետական համակարգում որդեգրվեց իշխանությունների տարանջատման սկզբունքը: Քայլեր իրականացվեցին դատախարակական համակարգի բարեփոխման, երկրում քաղաքացիական հասարակության որոշ էական հանգրվանների ձևավորման ուղղությամբ: Տնտեսության բնագավառում անդառնալիորեն հաստատվեց շուկայական հարաբերությունների գերիշխանությունը: Այդ բոլորի արդյունքում հայ ժողովուրդը աշխարհին ներկայացավ իր կայացած անկախ պետականությամբ, դարձավ քաղաքակիրթ միջազգային հանրության մասը:

Անկախ պետականության առաջին տասնամյակին բաժին հասած աներևակայելի դժվարությունները՝ դարաբաղյան հակամարտությունը, շրջափակումը, աղետալի երկրաշարժի տեհևանքները խիստ բարդացրեցին հայկական պետականության հաստատման և ամրապնդման գործընթացը: Սակայն, այնուամենայնիվ, Հայաստանի քաղաքական ուժերին, ողջ ժողովրդին հիմնականում հաջողվեց պետականության հաստատման և հետագա զարգացման գործընթացի այդ փուլում, ընդհանուր առմամբ, ավարտին հասցնել հասարակության նորանկախ պետականությամբ քաղաքականապես կազմակերպումը, պետական ինքնիշխանության կառուցվածքային կայացումը: Անկախության նվաճումից հետո անցած 10 տարիների ընթացքում նոր պետականության հաստատմանն ու ամրապնդմանը նպատակաուղղված, հասարակության կյանքի ամենատարբեր բնագավառներում իրականացված ձեռնարկումների, ամբողջական գործընթացի արդյունքում հայոց պետականությունը նրա տակավին սկզբնավորման ժամանակահատվածի համեմատությամբ արդեն իսկ որոշ իմաստով զարգանում էր սեփական կայուն հիմքերի վրա:

*Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հրապարակումներում.*

ա) Մենագրություն

1. Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), «Լուսաբաց» հրատակաչություն, Եր., 2013, 603 էջ:

բ) Հոդվածներ

1. Հայ-վրացական փոխհարաբերությունները Վրաստանում 1991-1992 թթ. իշխանական ճգնաժամի ընթացքում, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի հիմնադրման 80-ամյակին նվիրված պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 52-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2002 թ. նոյեմբերի 26-30) 1-ին պրակ, Եր., 2003, էջ 271-275:

2. Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման պատմությունից, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի հիմնադրման 85-ամյակին նվիրված պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2007 թ. նոյեմբերի 7-9), I պրակ, Եր., 2008, էջ 220-222:

3. Էներգետիկ ճգնաժամը Հայաստանում 1990-1993 թթ. Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2009 թ. նոյեմբերի 19-21), I պրակ, Եր., 2010, էջ 290-292:

4. Հայ-ռուսական հարաբերությունները 1990-2001 թթ., «Էջմիածին» թիվ Ժ. հոկտեմբեր, Էջմիածին, 2011, էջ 26-40:

5. Հայաստանը Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում (1990-2001 թթ.), «Օրենք և իրականություն» Միջազգային իրավաբանական գիտական հանդես, ժողովածու N 12 (194), Եր., 2011, էջ 28-30:

6. Ժողովրդավարական վերափոխումների ընթացքը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում (1990-2001 թթ.), համահեղինակ Լ. Սիմոնյան, «Բանբեր Երևանի Համալսարանի», թիվ 138.6, Եր., 2012, էջ 60-73:

7. Արտաքին առնչությունների ուղով Հայաստանի առաջին քայլերը անկախացմանը նախորդած շրջանում, «Օրենք և իրականություն» Միջազգային իրավաբանական գիտական հանդես, մայիս, N 5 (1991), Եր., 2012, էջ 4-8:

8. ՀՀ ԶՈՒ-ի ստեղծման իրավական ապահովման հարցի շուրջ, «Հայկական բանակ» ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ռազմագիտական հանդես, թիվ 4 (74), Եր., 2012, էջ 111-117:

9. Հայաստանում ազատական տնտեսության ձևավորմանն ուղղված նախնական ձեռնարկումները, «Օրենք և իրականություն» Միջազգային իրավաբանական գիտական հանդես, հունիս, N6 (200), Եր., 2012, էջ 1-6:

10. Նորանկախ Հայաստանի Հանրապետության ճանաչման ընթացքը, «Էջմիածին» թիվ Գ. մարտ, Էջմիածին, 2012, էջ 58-67:

11. Վերափոխումները Հայաստանում ազգաբնակչության սոցիալական կացության հետ անմիջականորեն առնչվող ոլորտներում (1990-2001 թթ.), «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (4), Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Եր., 2012, էջ 25-39:

12. Հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը անկախ պետականության հաստատման ընթացքում (1990-2001 թթ.) «Օրենք և իրականություն» Միջազգային իրավաբանական գիտական հանդես. հուլիս-օգոստոս, N7-8 (201-202), Եր., 2012, էջ 14-16:

13. ՀՀ Սահմանադրության ընդունումը որպես անկախ պետականության հիմնավորման կարևորագույն գործոն, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2(5), Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Եր., 2012, էջ 25-30:

14. Հայ-իրանական միջպետական հարաբերությունների կայացումն ու զարգացումը (1990-2001 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, թիվ 2-3 (634-635),



մայիս-օգոստոս, սեպտեմբեր-դեկտեմբեր, Եր., 2012, էջ 68-78:

15. Տնտեսական վերափոխումների սոցիալական հետևանքները Հայաստանում (1990-2001 թթ.), «Էջմիածին» թիվ 9. մարտ, էջմիածին, 2013, էջ 113-126:

16. Российско-армянское сотрудничество в военной области как важный фактор упрочения государственного суверенитета республики Армения (1990-2001гг.), Международный центр науки и образования. Материалы XIV международной заочной научно-практической конференции. М., 2013, стр. 34-40.

17. Նորանկախ Հայաստանի միջպետական կապերի բնույթը Արևմտյան Եվրոպայի և աշխարհի մի շարք այլ երկրների հետ (1990-2001 թթ.), «Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), թիվ Ա., ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Եր., 2013, էջ 70-80:

18. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը անկախ պետականության հաստատման ընթացքում (1990-2001 թթ.) (պարսկերեն), «Պայման» պատմամշակութային հանդես թիվ 63, ԻԻՀ, Թեհրան, 2013, էջ 132-140:

19. Հայաստանի անկախացման հանրաքվեի պատմությունից, ժողովածու, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ և պրակտիկա (2012 թ. դեկտեմբերի 14), II պրակ, Եր., 2014, էջ 409-412:

20. Միջպետական հարաբերությունների բնույթը նորանկախ Հայաստանի և Թուրքիայի միջև (1990-2001 թթ.), Արցախի պետական համալսարան, Հայագիտական ուսումնասիրություններ (հոդվածների ժողովածու) 4/2013, Ստեփանակերտ, 2014, էջ 117-136:

21. ԱՄՆ-ի դերակատարությունը Հայաստանում անկախ պետականության հաստատման և անրապնդման գործընթացում (1990-2000 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, թիվ 2 (641), Երևան 2014, էջ 16-27:

## ПОГОСЯН ЭДУАРД ВАНИКОВИЧ

### ПРОЦЕСС УТВЕРЖДЕНИЯ И РАЗВИТИЯ НЕЗАВИСИМОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ В АРМЕНИИ (1990-2001 гг.)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 5-го мая 2015 г., в 14<sup>00</sup> на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной академии наук РА (0019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

#### РЕЗЮМЕ

Спустя 70 лет после падения первой Армянской Республики, в истории свободолюбивого армянского народа снова появилась возможность создать свое национальное независимое государство.

Долговечным памятником, созданным в этот период в результате политической борьбы стала Декларация о независимости, принятая Парламентом Армении в августе 1990 года, которая определила процесс установления независимого государства как осуществление взаимосвязанных коренных действий в общественной, политической и социально-экономических аспектах.

Декларация стала уникальным документом, определившим дальнейший путь провозглашения независимости армянского народа.

Становление независимости Армении представляло собой эволюционный процесс, когда республика ступенчатым развитием суверенности, 21 сентября 1991 г. в ходе референдума достигла политической независимости.

Решающую роль в событиях, происходящих как в Армении, так и во всем Советском Союзе сыграло подписание 8 декабря 1991 года руководителями России, Белоруссии и Украины документа о роспуске Советского Союза, без которого было бы крайне трудно в обсуждаемый период достичь политической независимости как другим союзным республикам, так и Армении.

В декабре 1991 года независимая республика Армения стала членом Содружества Независимых Государств.

В Армении начался переходный период, который предполагал период, в процессе которого в Республике должны были осуществиться формирование демократического общественного строя с рыночной экономикой, реформы направленные на становление и дальнейшего развития в политической жизни независимой государственности в Армении.

Армения,двигающаяся по пути становления независимой государственности была вынуждена осуществлять свои первые шаги, находясь в экономически крайне сложной ситуации. Создававшаяся безвыходная ситуация имела свои как объективные, так и субъективные причины.

Следствием развала индустриальной экономики государства, стало усиление эффективности блокады Армении со стороны Азербайджана и осуществление террористических актов, входящих в Армению энергоносителей.

С самого начала периода политической независимости Армении, у общественности определилась уверенность в том, что становление полноправной суверенной, национальной государственной власти было возможно исключительно установлением в стране рыночных отношений.

С этой целью приватизация государственных активов, принимая как уже состоявшийся исторический факт со всеми своими ошибками и недостатками, с точки зрения поставленной цели, решила важнейшие задачи перехода к рыночному общественному строю.

Приватизация стала необходимым составляющим процесса становления независимой государственности. В рамках экономических инициатив были предприняты определенные шаги в формировании социальной системы, освободились цены, была введена национальная валюта и так далее. Многочисленные ошибки предпринятых решений привели к обострению социального положения населения.

В рамках процесса становления и развития независимой государственности в республике были приняты решительные меры либерализации общественно-политической жизни.

С середины 1990-ых годов со стороны властей в политической жизни Республики Армения начались антидемократические процессы. Ситуация относительно изменилась в 1998 году, сменой власти в Армении.

Осуществляемое государственное строительство в Армении, естественно, являлось важнейшим направлением в становлении и развитии независимой государственности. Образование суверенитета на государственном уровне в Армении фактически началось с состоявшихся парламентских выборов в 1990 году. Каждый вновь образованный парламент знаменовал собой качественно новый уровень воспроизводства государства.

Президентские выборы 1991 года стали основой полупрезидентской системы правления.

Была создана армянская армия, принята конституция РА, ставшая стержнем правового поля, образовалась система местного самоуправления и т.д.

В процессе становления независимой государственности важным показателем было признание независимости РА подавляющим большинством стран мира, с которыми были установлены дипломатические отношения. Армения стала членом международных организаций и активно сотрудничала с ними, что являлось показателем полноправного субъекта в международных отношениях и одновременно еще больше укрепляла независимость РА.

Еще более сложной проблемой было осуществление действий, обусловленных необходимостью разработки и ведения внешней политики с соседними странами, исходя из национальных интересов страны. В этом вопросе важно было обратиться к историческому опыту прошлого.

Армения, двигаясь по пути установления и дальнейшего развития суверенной государственности, осуществляла поддержку как на международной арене, так и в экономическом, военном и других областях в освободительной борьбе Арцаха. Поддержка Нагорного Карабаха стала важным проявлением самостоятельности для недавно стившей суверенной Республики Армения.

Независимость еще более усилило национальное самосознание, придав новое качество национальной борьбе за свободу.

После обретения независимости весь армянский народ получил исключительную возможность раскрыть, озвучить на государственном уровне разнообразные проблемы, касающиеся самобытности, способствуя этому всей мощью государства. На повестке дня внешней политики РА достойное место было выделено вопросу международного признания Геноцида армян. Единственным официальным языком суверенного государства стал армянский язык.

Суверенная Армения восстановила поклонение национальным героям. Жизненно необходимым стал принцип объединения армянского народа. Правительство Армении проводило различные мероприятия для укрепления связи диаспоры с Родиной.

The process of Establishment And Development of the Independent State System in Armenia (1900-2001).

Dissertation for the degree of the Doctor of Sciences (History) on the specialization of “History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation be held on May 5, 2015, 14<sup>00</sup>, at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Bagramyan Ave. 24/4).

SUMMARY

Armenian people had an opportunity to create their independent national republic after 70 years fall of the first Republic of Armenia.

As a result of the political struggle the Declaration of Independence was adapted by the Armenian Parliament in August 1990. It determined that process as the realisation of correlated actions in social, polotical and social-economic aspects.

The declaration became a unique document wich determined the further way of declaration of independence of Armenian people.

The process of independence was an evolutional process, when the Republic became independent as a result of referendum on September 21, 1991.

On December 8, 1991 the Leaders of Russia, Belorussia and Ukraine subscribed the document of dissolution of Soviet Union, without wich the Soviet republics reach political independence.

In December 1991 the Independent Republic of Armenia became a member of the Common-wealth of Independent States (CIS).

The transitional period started in Armenia. The formation of democratic social system with market economy and reformes directed to formation and further development of the independent state system of Armenia had to be held.

Armenia took its first steps being in the extremely complicated economical situation. This desperate situation had its objective and subjective reasons.

The reinforcement of the blockade on the part of Azerbaijan brought to the brakedown of the economy.

From the beginning of the Armenian political independence people were sure that the establishment of the Law Competent sovereign national State power was possible in case of establishment of market relations in the country . For that purpose the privatization of gavermental assets, with its mistakes and shortcomings, solved the most important task of transition to market relations. Before only the Government had the exclusive right to privatization of the means of production.

Some definite changes were made in the economy: national currency was introduced, prices were set free. A lot of mistakes of the taken decisions brought to the aggravation of the people's social status.

Some decisive measures were taken on liberalization of the socio-political life in the Republic.

From the middle of 1990s antidemocratic processes in the political life of Armenia were carried out by the Government.

In 1988 the situation was relatively changed with the change of the government in Armenia.

Presidential elections in 1991 established semi-presidential system of government.

The National Army was formed, the Constitution of RA was adapted, the system of self-government was formed.

Most of the countries recognized the independence of Armenia and established diplomatic relations with the country.

Armenia became a member of some international organizations and cooperated with them.

It was difficult to carry foreign policy with the neighbouring countries.

Armenia supported Artsakh on the international scene as well as the economic, military and other spheres. The support of Artsakh became the manifestation of self-dependence for the newly established sovereign Republic of Armenia.

On the agenda of the RA foreign policy was the international recognition of the Armenian Genocide. The Armenian language became the official language of the country.

The Armenian Government took steps towards strengthening the connections between diaspora and native land.